

ԻՐԱՆԻ ԴԵՍՊՈՒՆԸ ԱՅՑԵԼԵՑ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

Լիբանանի մէջ Իրանի դեսպան Մոհամէտ Ալի Սուլիմանի, Հինգշաբթի, 3 Յունուարին այցելեց Հայ Կաթողիկէ Պատրիարքարան, Էջրեֆիէ, Ս. Ծննդեան տօնին եւ Ամանորի առիթներով շնորհաւորելու ամենապատիւ Ներսէս Պետրոս ԺԹ. կաթողիկոս - պատրիարքը եւ ներկայացնելու իր բարեմաղթանքները:

Հանդիպումի ընթացքին, որուն ներկայ եղան Լիբանանի Թեմի Պատրիարքական ընդհանուր փոխանորդ Արիի. Տ. Վարդան եպս. Ազգարեան եւ օգնական եպիսկոպոս Արիի. Հ. Յովհաննէս եպս. Թէյրուպեան, խօսակցութեան նիւթ դարձան իրանական - իրանական փոխ յարաբերութիւնները, քրիստոնէայ - իսլամ համակեցութիւնը, ինչպէս նաեւ Հայաստանի յարաբերութիւնները Իրանի հետ:

Դեսպանը դրուատալից խօսքերով արտայայտուեցաւ իրանախաղաղութեան եւ անոր առողջ դիրքորոշումներուն մասին, նշելով, որ ան պետութեան վստահութեան եւ յարգանքին արժանի համայնք մըն է, որ կը վայելէ իր բոլոր պատուութիւնները:

ԴԻՒՍ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

Պէյրուս, 4 Յունուար 2002

ՅԵՏԱԶԳՈՒԱԾ

Ճեմարանի Շրջանաւարտից Սիւրբեան կազմակերպած CHEESE AND WINE յետաձգում է:

L.B.C. ՊԱՏԿԵՐԱՍՓԻՒՌԷՆ

Շաբաթ, 5 Յունուար 2002ին, L.B.C. պատկերասփիւռի կայանը իր «Նահարդոմ Սայիտ» յայտագիրի ընթացքին (կէսօրուան ժամը 12:00էն 14:00), սննդականոցի մասնագետ ՊԱՐԼԱ ԵԱՐՏՍԵԱՆ պիտի ներկայացնէ հայկական զանազան ճաշերու ճիւղ ճաշացուցակ մը, ապա ան բացատրութիւններ պիտի տայ այդ ճաշերու ուժանիւթի, բաղադրութեան եւ մասնաւորաբար հայկական տոհմիկ ասանդուներու հետ կապուած տեղեկութիւններու շուրջ:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Մարի Զէյթունեան եւ դուստրը՝ Ռիթա Տէր եւ տիկին Մինաս Զէյթունեան
Տիկին Արաքսի Զէյթունեան եւ զաւակուհի
Տէր եւ տիկին Վահէ Մելքոնեան եւ զաւակուհի
Տէր եւ տիկին Սարգիս Գարակէօզեան եւ զաւակուհի
Տէր եւ տիկին Յակոբ Օթուկպիրեան
Տէր եւ տիկին Աւետիս Ազրեան
Օր. Ովաննիս Գարակէօզեան
Պահատուրեան ընտանիք
Պէրպէրեան ընտանիք
Ռուստուզ ընտանիք
Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր եւ հարազատին՝

ՍԵՂԻՍ ԶԱՅՆՈՒՄ ԶԵՅԹՈՒՆԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 3 Յունուար 2002, իր բնակարանին մէջ:
Յուղարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ նոյն օրը, կէսօրէ ետք ժամը 1:00ին, Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատան մատրան մէջ:
● Ներկայ ընդունիլ իբրեւ մահազգ:
● Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Անթիլիաս, Ուրբաթ 4 եւ Շաբաթ 5 Յունուարին:

ՀԱԼԷՊ ՀԱԼԷՊ ՄԱՀԱԶԴ

Տիկին Զարուհի Մոմճեան
Տէր եւ տիկին Յակոբ Մոմճեան եւ դուստրը
Տէր եւ տիկին Անդրանիկ Արքեան եւ զաւակուհի
Տէր եւ տիկին Նազարէթ Սապուհեան եւ զաւակուհի
Տիար Կարապետ Մոմճեան եւ զաւակուհի
Մոմճեան ընտանիք
Արքեան ընտանիք
Սապուհեան ընտանիք
Լէփճեան ընտանիք
Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, աներոջ, եղբոր եւ հարազատին՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՄՃԵԱՆԻ (Ծնեալ՝ Մարտ, 1908ին)

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 2 Յունուար 2002ին, յետ կարճատեւ հիւանդութեան:
Յուղարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Հինգշաբթի, 3 Յունուար, կէսօրէ առաջ ժամը 11:00ին, Հալէպի Նոր Գիւղի Ս. Երրորդութիւն (Չուարթնոց) եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ հայ կաթողիկէներու գերեզմանատունը:
● Ներկայ ընդունիլ իբրեւ մահազգ:
● Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Նոր Գիւղ, Չուարթնոց եկեղեցւոյ կից, Ուրբաթ 4 եւ Շաբաթ 5 Յունուարին:

ՎԱՐՉԱՊԵՏ ԸԱՐԻՐԻ ԼԱԻԱՏԵՍ Է 2002Ի ԳԾՈՎ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ լոյս տեսած հարցազրոյցի մը մէջ ըսաւ, որ կը մերժէ տարուիլ այլ կողմերու հետ բանավէճերու եւ կը կեղրոնանայ Նոր Տարուան ընթացքին Լիբանանի դիմագրաւելիք քաղաքական եւ տնտեսական մարտահրաւերներուն վրայ:

Հարիրի վստահութիւնը յայտնեց, որ Լիբանան դժուարութիւնները պիտի յաղթահարէ իր խոհեմ քաղաքականութեան եւ ներքին միակամութեան շնորհիւ:
Անտեղի են տնտեսական եւ էլեմտական հարցերու շուրջ մտաւարտութիւնները, ընդհակառակը՝ պատճառներ կան նախատեսելու, որ 2002ը նախկինէն աւելի լաւ տարի մը պիտի ըլլայ, ըսաւ վարչապետը: Ան բացատրեց, որ կառավարութիւնը մերժած է որդեգրել տնտեսական եւ էլեմտական պայմանները դարձանելու Արժանքի նիւթի եւ Թուրքիոյ ձեռքը, եւ կը գործէ փորձառութեան հիմամբ: Վստահութիւնը կենսական է անհատներուն, ինչպէս նաեւ պետութիւններուն եւ կառավարութիւններուն:

րուն համար, հետեւաբար նախանձախնդիր ենք պահպանելու այդ վստահութիւնը, ըսաւ ան:

Վարչապետ Հարիրի վերահաստատեց, որ Հրկապալա օտար բռնագրաւումին դիմադրած կուսակցութիւն է եւ չկայ պետութիւն մը, որ կ'առարկէ անոր դերակատարութեան:

Ան ընդգծեց, որ Լիբանանի եւ Միացեալ Նահանգներու յարաբերութիւնը բարեկամական բնոյթ ունի եւ տարակարծութիւն չկայ անոնց միջեւ. նման կացութիւն կ'ուզէ ստեղծել Իսրայէլը, բայց մենք կը մերժենք ընթանալ այդ ուղիով:

ՊԵՅՐՈՒԹԻ ՄԷՋ ԳՈՒՄԱՐՈՒԵԼԻՔ ԱՐԱԲԱԿԱՆ ԳԵՐԱՍՏԻՃԱՆԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Պէյրուսի մէջ 25 եւ 26 Մարտին գումարուելիք արաբական գերաստիճանի նախապատրաստութիւններու ծիրէն ներս, արտաքին գործոց նախարար Մահմուտ Համուտ երէկ մշակոյթի նախարար Ղասսան Սալամէի ներկայութեան գլխաւորեց Լիբանանի մէջ արաբ դեսպաններու եւ դիւանագէտներու ներկայացուցչութեան պետերու ժողով մը, որուն աւարտին ան ըսաւ, որ արաբական ամէն հարց կամ դատ հարցն է իւրաքանչիւր արաբական պետութեան, ուստի միասնաբար պէտք է աշխատիլ ապահովելու այս գերաստիճանի յաղթութիւնը եւ բոլոր պէտք է ընենք մեր կարելին, որպէսզի դժուար պայմաններու մէջ գումարուող այս գերաստիճանը պատմական նշանակութիւն ունենայ:

Համուտ հաւաստեց, որ գերաստիճանին մասնակցելու հրահրներ պիտի ուղղուին բոլոր արաբական պետութիւններուն եւ անոնց ղեկավարներուն, ներառեալ՝ Լիպոյ ղեկավար Մուամմար Քադաֆիի: Գերաստիճանի օրակարգը կը պատրաստեն զայն հիւրընկալող երկիրն ու Արաբական Լիգայի ընդհանուր քարտուղարը, բայց Լիգայի անդամ իւրաքանչիւր պետութիւն իրաւունք ունի պահանջելու, որ օրակարգին վրայ աւելնայ իր առաջարկած կէտը, բացառեց Համուտ:

Ս. ԾՆՆԳԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ ՍՐԲՈՅ ՎԱՐԴԱՆԱՆՅ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ

Տեառն Սերոյ եւ Փրկչին՝ Յիսուս Երիստոսի Ս. Ծննդեան եւ Յայտնութեան Տօնին առիթով, Կիրակի, 6 Յունուար 2002ին, եկեղեցւոյ մէջ հանդիսաւորապէս Սուրբ եւ անմահ պատարագ պիտի մատուցուի:

Պիտի պատարագ եւ քարոզ՝ ՀՈԳՇ. Տ. ՓԱՌԷՆ ՎՐԴ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

Սիրով կը հրաւիրենք մեր պատուական եւ հաւատացեալ ժողովուրդը՝ մասնակցելու Ս. պատարագին եւ հաղորդուելով՝ վերանորոգուելու հոգեւորապէս Բերդեմեմեան Խորհուրդով:

ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ Ս. ՎԱՐԴԱՆԱՆՅ ԵԿԵՂԵՑՈՅ

Ս. ՅԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻ (ԷՇՐԵՖԻԷ) ԽՈՄԱՆ ԵՒ ԾՆՆԳԵԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳՆԵՐ

Ի գիտութիւն մեր ազնիւ եւ հաւատացեալ ժողովուրդին կը յայտնենք, թէ մեր Տիրոջ՝ Յիսուսի Երիստոսի հրաշափառ Ծննդեան տօնին առիթով, ստորեւ յիշուած ժամանակացոյցին համաձայն պիտի կատարուին սրբազան արարողութիւնները:
Ա. ՃՐԱԳԱԼՈՅ. Շաբաթ, 5 Յունուար 2002
- Կէսօրէ ետք ժամերգութիւն ժամը 4:00ին
- Ընթերցուածներու ընթերցում ժամը 5:00ին
- Ճրագալոյցի Աւետում դարձաւ դասի կողմէ ժամը 8:30էն 11:30 Մար Սըխայէի շրջան
- Ծննդեան յատուկ ժամերգութիւն Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ՝ ժամը 12:00էն 1:00
Այնուհետեւ Աւետումի շարունակութիւն Էջրեֆիէի շրջան:

Բ. Ս. ԾՆՆԳԵԱՆ ՊԱՏԱՐԱԳ. Կիրակի, 6 Յունուար 2002
- Առաւօտեան ժամերգութիւն ժամը 7:30ին
- Ս. պատարագ ժամը 9:30ին
- Ջորիմէք ժամը 11:00ին
Օրուան արարողութեան պիտի նախագահէ, պատարագ եւ քարոզ՝ ԳԵՐՊ. Տ. ՆԱՐԵԿ Ծ. ՎՐԴ. ԱԼԵԽԻՄԷՋԵԱՆ
Սիրով կը հրաւիրենք մեր ժողովուրդի զաւակները՝ վերոյիշեալ հոգեպարար արարողութեանց:
Երիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ Չեզի Սեզի Մեծ Աւետիս
ՀՈՎԻԷ ԵՒ ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ Ս. ՅԱԿՈԲ ԵԿԵՂԵՑՈՅ

ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ԵՐԵՎԱՆԻ ՄԱԿԻ ԽԱՐԻՊԸ, ՈՐ ՆԵՐԿԱՅԳՈՅ ԱՐԵՎՄՈՒՅԱՆ ՊԵՔԱՎԻ ԿԱՐԻՔՆԵՐԸ

Ան յայտնեց, որ խօսուած է քաղաքական հարցերու մասին, յոյս յայտնելով, որ այդ հարցերը լուծման ուղիութեամբ կ'ընթանան: Երեսփոխան Քապալան Իսա Խուրի Հարիրիի ներկայացուց Պշարրէի կարիքները եւ ողջունեց անոր լաւատեսութիւնը: Իսա Խուրի նկատել տուաւ, որ Սուրիա թեր արտայայտուած է արաբական գերաստիճանի ճշդուած թուականին գումարումին:

Երեսփոխան Փիեռ Ժեմայէլ վարչապետին հետ տեսակցելէ ետք ըսաւ, որ անհրաժեշտ է տնտեսական արագ եւ լուրջ լուծումներ գտնել, որովհետեւ քաղաքացին անկարող դարձած է տանելու դժուարութիւնները:

ԹԱԼԻՆ ԳԵՆՐԳԵԱՆ ԸՆԴ ՍԵՒԱԿ ՇԱՍԼԵԱՆ

Նշանուած 1 Յունուար 2002, Պէյրուս

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

● Տիկին Ծովակ Խաչերեանի մահուան առիթով, տիկին Ալիս Սուլուքեան 100,000 Լ.Պ. ԼՕՍԻԻ «Արաքսի Պուղոլորճեան» ընկերաբժշկական կեդրոնին:

ՍՏԱՑԱՆԵ

● «ՀԱՅ ԾԻՍԱԿԱՆ ՊԱՇՏԱՍՈՒՆԸ»

Ընդունալ՝ ԱՆԴՐԱՆԻԿ Ծ. ՎՐԴ. ԿՈՒԱՆԵԱՆ ԵՎ ԵՅԱՐՈՒՆ ԵՒ ՍԿԱՐՈՒՆ ԵՒ ՍԻՓԱՆ ԻՐԱՏԱՐԱԿԱՆՈՒՆ

STUDIO **Lantern**
● Կը ստանձնէ ուրախ առիթներու video նկարահանումներ
Հեռ. 01-268366 եւ 03-695399

ՀԱՆԴԻՍԱՒՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ Ս. ԾՆՆԳԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Տեառն Սերոյ Յիսուսի Երիստոսի Ս. Ծննդեան տօնին առիթով, Կիրակի, 6 Յունուար 2002ին, Լիբանանի թեմի եկեղեցիներու մէջ հանդիսաւոր Սուրբ եւ անմահ պատարագ պիտի մատուցուի Սեծի Տան Կիլիկիոյ կաթողիկոսութեան միաբան հայրերու կողմէ:
Ստորեւ՝ պատարագի միաբան հայրերու ցան.

- ԿԸ. ● Ս. Նշան Մայր եկեղեցի՝ Տ. ԳԵՂԱՍ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ (Առաջնորդ Լիբանանի Հայոց Թեմի) ● Ս. Քառասնից Մանկանց՝ Տ. Նորայր Ծ. Վրդ. Աջրեան ● Ս. Աստուածածին՝ Տ. Վարդան արք. Տեմիրճեան ● Ս. Սարգիս՝ Տ. Գրիգոր Վրդ. Չիֆթեան ● Ս. Յակոբ՝ Տ. Նարեկ Ծ. Վրդ. Ալեմեգեան ● Ս. Յարութիւն (Տունիէ)՝ Տ. Գեղարդ արք. Զիւլպիեան ● Ս. Վարդանանց՝ Տ. Փառն Վրդ. Վարդանեան

Կոչ կ'ուղղենք սիրելի մեր ժողովուրդի զաւակներուն՝ ներկայ գտնուելու Սուրբ եւ անմահ պատարագին, հաղորդուելու Ս. Ծննդեան Խորհուրդով, լսել օրուան պատգամը եւ վայելել Հայոց. Եկեղեցւոյ արարողութեանց հայաբոյր ծեսը:

ԴԻՒՍ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Սեր Տիրոջ եւ Փրկչին՝ Յիսուս Երիստոսի Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնի ճրագալոյցին օրը, 5 Յունուար 2002ի երեկոյեան ժամը 9:00ին, հայկական ATN պատկերասփիւռի կայանէ, Ն. Ս. Օ. Տ. Արմ. Ա. կաթողիկոս Սեծի Տան Կիլիկիոյ Հայրապետական իր պատգամը պիտի ուղղէ մեր ժողովուրդին:
Վեհափառ հայրապետին ցոյց պատգամը, կաթողիկոսութեան Web - Siteին ձամբով պիտի սփռուի մեր ժողովուրդին բոլոր զաւակներուն, հաղորդակից դարձնելով զանոնք Երիստոսի Ս. Ծննդեան խորհուրդին:

ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՍՈՒՐԲ ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳ Ս. ՔԱՌԱՍՆԻՅ ՄԱՆԿԱՆՅ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ

Կիրակի, 6 Յունուար 2002, Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնին առիթով, հանդիսաւոր Սուրբ եւ անմահ պատարագ պիտի մատուցուի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ:

Պիտի պատարագ եւ պիտի քարոզ՝ ԳԵՐՊ. Տ. ՆՈՐԱՅՐ Ծ. ՎՐԴ. ԱՇԸԳԵԱՆ

Երգեցողութիւնը պիտի կատարուի եկեղեցւոյ դարձալի «ՆԱՐԵԿԱՅԻ» երգախումբին կողմէ, Եկեղեցւոյ քառասնից եղանակով, խմբավարութեամբ՝ պրն. ԳԵՆՐԳ ՊԵՊԵՆԵԱՆԻ:
Սկիզբ ժամերգութեան ժամը 7:00ին
Ս. պատարագ ժամը 9:30ին
Քարոզ ժամը 10:30ին
Ջորիմէք ժամը 11:30ին

Սիրով կը հրաւիրենք մեր բարեպաշտ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու տոյն հոգեպարար արարողութեան եւ հաղորդուելու օրուան պատգամով:
ՍՐԲՈՅ ԸԱՌԱՍՆԻՅ ՄԱՆԿԱՆՅ ԵԿԵՂԵՑՈՅ ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՍՈՒՐԲ ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳ Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ - ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ

Կիրակի, 6 Յունուար 2002, Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնին առիթով, հանդիսաւոր Ս. պատարագ պիտի մատուցուի Ս. Յովհաննու - Կարապետ եկեղեցւոյ մէջ:
Պիտի պատարագ եւ պիտի քարոզ՝


ՀՈԳՇ. Տ. ՄԱՇՏՈՅ ՎՐԴ. ԶՕՊԱՆԵԱՆ

Սկիզբ ժամերգութեան ժամը 7:00ին
Ս. պատարագ ժամը 9:00ին
Քարոզ ժամը 10:00ին
Ջորիմէք ժամը 11:00ին
Սիրով կը հրաւիրուի մեր բարեպաշտ ժողովուրդը՝ մասնակցելու տոյն հոգեպարար արարողութեան:
ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴ Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ - ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՅ

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

● Արտաշէս Տէր Խաչատուրեանի մահուան 8րդ եւ Լուսին Տէր Խաչատուրեանի մահուան 3րդ տարեկիցին առիթով, նոյնանուն ֆոնտին «Ազգ. Գեորգ Զաքարյան» եւ Թորոնթոյէ կաթողիկոսութեան կողմէ կատարուին:
Տէր եւ տիկին Զարեհ եւ Սիւլեյ Տէր Խաչատուրեան 100 տոլար
Տէր եւ տիկին Տարոն եւ Սարլէն Տէր Խաչատուրեան 100 տոլար
Տէր եւ տիկին Բաֆֆի եւ Շաղիկ Սեւրպալեան 100 տոլար
Տիկին Սօսի Պալեան եւ զաւակուհի 100,000 Լ.Պ.
Տէր եւ տիկին Ժան եւ Լիզի Լափոյեան 50 տոլար
Օր. Արշակուհի եւ Լուսին Տէր Խաչատուրեան 50,000 Լ.Պ.
Տէր եւ տիկին Արման եւ Արաքսի Գրիգորեան 50,000 Լ.Պ.

ՊԼԵՐ ՀՆԴԿԱՍՏԱՆ ԿԸ ՄԵԿՆԻՆԻ ԵՒ ԻՍԼԱՄԱՊԱՏԸ ՀԱՄՈՁԵԼՈՒ, ՈՐ ԲԱՆԱԿՅՈՒԹԵԱՆՑ ՉԵՌՆԱՐԿԵՆ



Վանֆայի կը հասնի Նեֆալ:

Մինչ միջազգային ճիգեր եւ նախաձեռնութիւններ ի գործ կը դրուին մեղմացնելու համար լարուածութիւնը Հնդկաստանի եւ Փաքիստանի միջեւ, երկու երկիրներուն սահմանագիծին վրայ բախումները կը շարունակուին՝ գոհեր եւ վիրաւորներ պատճառելով:

Միացեալ Նահանգներ եւ Չինաստան կողմէ ռազմական ճնշումներով խաղաղ միջոցներով լուծելու իրենց տագնապար: Իսկ Բրիտանիոյ վարչապետ Թոնի Ծարը՝ էջ 10

ԵՆՈՒՐՈՅԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹԻՒՆԸ ՀԵՋԱՍԱՀ ԿՐՆԹԱՆԱՅ

ՊԵՐԼԻՆ, 3 (ՌՈՅԹԸՐԸ).- Իտալիոյ մէջ որոշ հարցեր ծագած են Հինգշաբթի օր Եւրոյի ծնունդին առնչութեամբ, սակայն այլ երկիրներու մէջ հարցերը հազուադէպ եղած են, մինչ Եւրոպական Կեդրոնական Իրամատուր կը յայտնէր, թէ ընդհանուր առմամբ հեղափոխական տարրերը իր ակնկալութիւններէն անդին զայն զայն զարգացնելու համար:

Եւրոյի առանց որեւէ հարցի շրջանառութեան դրուելը մղած է Բրիտանիոյ վարչապետ Թոնի Պլեյրը, որ ցարդ ամէնէն ուժգին պահանջները արտայայտելու միացեալ դրամանիշին հանդէպ:

Բրիտանիա, Գանիա եւ Շուէտ որոշած էին դուրս մնալ Եւրոյի գոտիէն, երբ անիկա իբրեւ տակաւին ոչ շոշափելի դրամանիշ 1999ին շրջանառութեան մէջ դրուած էր: Սակայն Պլեյր խոստացած է անդամակցութեան հարցով դարձեալ պարզիլ 18 ամիսէն:

ՉԵՉԵՆԻՈՅ ՄԵՉ

ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ԱԻԵԼԻ ԲԱՆ 100 ԶԻՆԵԱԼ ՍՊԱՆՆԱԾ Է

ՄՈՍԿՈՒՄ, 3 (ՌՈՅԹԸՐԸ).- Ռուսական բանակը Հինգշաբթի օր յայտնած է, թէ անջատողական Չեչենիոյ մէջ համապարփակ գործողութեան մը ընթացքին աւելի քան 100 ըմբուսներ սպաննած է եւ թէ նոր մարտավարութիւններ ըմբուսներուն շուրջ պաշարման օղակը ամրապնդած են:

Ըստ «Ինթերֆաքս» լրատու գործակալութեան, ռուս զինուորները գործողութիւնը տարած են մայրաքաղաք Կրոպնիի հարաւարեւելքը գտնուող Քուրչալոյ շրջանի 4 գիւղերու մէջ:

Բախումներուն մեծամասնութիւնը կեդրոնացած է Յացան - Եւրթ գիւղին շուրջ: «Ինթերֆաքս»-ի համաձայն, չեչեն շարք մը մարտական իրամասնաւորներու սպաննուած են գործողութեան ընթացքին եւ թէ ռուսները 2 Կոն եւ 11 վիրաւոր արձանագրած են:

Ըմբուսներու համաձայն կայքին համաձայն, չեչեն շարք մը մարտական իրամասնաւորները կը շարունակուին:

ուին եւ 40 ռուս զինուոր սպաննուած է եւ նոյն թիւով վիրաւորուած:

Ռուսական լրատուադրուներու համաձայն, կեանքը բնականոն դառնալու ընթացքին մէջ կը գտնուի Չեչենիոյ մէջ, սակայն 150 հազար գաղթականներ կը մնան մոտակայ ինկուշերիոյ մէջ, այն մտավախութեամբ, թէ հակադարձութեան կրնան ենթարկուիլ եթէ վերադառնան:

ԱԶՐՊԵՅՃԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԴԵՍՊՈՒՆԱՏԱՆ ԴԻՄ ԱՀԱԲԵԿԶՈՒԹԻՒՆ ԾՐԱԳՐՈՂ ԾԱՅՐԱՅԵՂԱԿԱՆՆԵՐՈՒ ԶԵՐԲԱԿԱԼՈՒՄ

Ազրպէյճանի ազգային անվտանգութեան նախարարութիւնը Զորքշաբթի օր յայտարարած է, թէ ձերբակալած է ծայրայեղական «Շիզմ - ու - Թահրիր» խմբաւորումի միջին անդամ վեց իսլամականներ: Զերբակալուածներէն հինգը ունին ազրպէյճանական, իսկ մէկը՝ ուրբանական անցագիր: Եօթներորդ կասկածելի մը ուղղութիւնը, յարցում է ինչո՞ւ պար: Ըստ նախարարութեան անոնք կը ծրագրէին

յարձակում գործել Պարսի մէջ Միացեալ Նահանգներու դեսպանարան եւ երկրին մէջ միջազգային եւ դիւանագիտական կեդրոններու վրայ:

Զերբակալութեան վայրին մէջ յայտնաբերուած են ռումբերու տպագրութեան եւ իսլամական քարոզչութեան գրքոյկներ:

«Շիզմ - ու - Թահրիր»-ը հիմնուած է 1950ականներուն: Անոր ղեկավարը՝ ուղղութիւն Աղաթալուհի մով 1990ականներու սկիզբը բանդարկուած է Ուղղութիւնարանի մէջ եւ ազատ արձակուելէ ետք Օգոստոս 2000ին անցած է Ազրպէյճան: «Շիզմ - ու - Թահրիր»-ը կ'ուզէ իսլամական դեպոտիստական ինքնիշխանական Ասիոյ մէջ:

Խմբաւորումը վերջերս թռուցիկներ ցրուած էր Պարսի մէջ, դադարաւարտելով Աֆղանիստանի մէջ ամերիկեան գործողութիւնները:

ԹՐԲԱԿԱՆ ԲԵՆՆԱՏԱՐՆԵՐ ԻՐԱՔԵՆ ՊԻՏԻ ՎԵՐԱԿԱՆՆԵՐ ՄԱՉՈՒԹԻ ՆԵՐԱԾՄԱՆ

Յունուար 7-ին սկսեալ, թրքական բեռնատար ինքնաշարժներ պիտի վերակսին մազուլի ներածման հիւսիսային իրաքէն, յայտնեց թուրք պաշտօնատար մը: Մազուլի ապօրինի առեւտուրը կանգ առած էր Սեպտեմբերին, երբ իրաք դադարեց մազուլի առաքումը դէպի քրտաբնակ հիւսիսային շրջանները: Պաշտօնի որոշումը պատճառ դարձած է, որ թուրքիա այլ չուկաներէ պահանջէ մազուլի ու վառելանիւթի իր պէտքը:

Թուրքիոյ Սիրքան նահանգի կառավարիչը՝ Հիւսէյն Պաշայա ըսաւ, որ առեւտուրը պիտի վերակսի Յունուար 7-ին: Առաջին հանգրուանին արտօնութիւն պիտի տրուի օրական հարիւր բեռնատարի, որ սահմանը անցնի ու մազուլի բեռը ստանձնէ: Աւելի ուշ եւ ըստ կարիքի պիտի բարձրանայ թիւը:

Հիւսիսային իրաքէն թուրքիա կատարուող արտածումը ապօրինի կը նկատուի, որովհետեւ ՄԱԿի «քարիւղի փոխարէն սննդանիւթ» ծրագրին շրջագիծին մէջ տեղի չունենար: Սակայն թուրքիոյ արեւմուտքի դաշնակիցները աչք կը գոցեն այս առեւտուրին, որ շահաբեր կը նկատուի թուրքիոյ տաղանապահար տնտեսութեան եւ յատկապէս՝ հարաւարեւելեան շրջաններուն համար:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԻՐԱՆ ՊԻՏԻ ՅԱՐԳԷ ՕՓԷՔԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՏՈՒՊԱՅ, 3 (ՌՈՅԹԸՐԸ).- ՕՓԷՔԻ անդամ Իրան Հինգշաբթի օր յայտարարեց, որ պիտի յարգէ քարիւղի կազմակերպութեան ճշդած կրճատումը:

Իրանի քարիւղի ընկերութեան փոխ տնօրէնը՝ Հոմայուն Լահմիֆար ըսաւ, որ 1 Յունուարէն սկսեալ Իրանի քարիւղի արտադրութիւնը արձանագրած է տասը առ հարիւր կրճատում մը: Ան անցուց, որ քարիւղի պետական ընկերութիւնը կրճատումի որոշումը փոխանցած է Իրանէն քարիւղ ներածող բոլոր յաճախորդներուն, որպէսզի անոնք ալ իմանան, թէ նուազ պիտի ներածեն:

Իրանի քարիւղի արտածման 60 առ հարիւր Արեւմուտքի շուկաները կը հասնի, իսկ 40 առ հարիւրը՝ Արեւելքի շուկաները: Կրճատումի որոշումին լոյսին տակ, Իրան օրական երկու հարիւր հազար տակաւ նուազ պիտի արտածէ: Կրճատումէն առաջ, Իրան օրական 2,05 միլիոն տակաւ կ'արտածէր:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ժուլիան Ս. Յարութիւն Եկեղեցւոյ թաղականութիւնը կը յայտնէ շրջանի բարեպաշտ ժողովուրդին, թէ Ս. Ծնունդի տօնին առիթով, Կիրակի, 6 Յունուար 2002ին պիտի պատարագէ եւ քարոզէ՝

ՀՈԳՇ. Տ. ԳԵՂԱՐԴ ԱԲՂ. ԲԻԻՍՊԷԿԵԱՆ

Սկիզբ ժամերգութեան Պատարագ Զարոգ Զորինէք

Ժամը 7:30ին
Ժամը 10:00ին
Ժամը 11:00ին
Ժամը 11:30ին:

ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԺՈՒՆԻԵՒ Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՎԵՂԵՑԻՈՅ

ՄԵՐԶԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՎԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ

Սբ. Ծննդեան տօնին առիթով, Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան նախագահը եւ Կեդրոնական Մարմինը շնորհաւորութիւններ պիտի ընդունին Կիրակի, 6 Յունուար 2002, կեսօրուան ժամը 12:00էն կեսօրէ ետք ժամը 2:00, Հայ Աւետարանական Ա. Եկեղեցիի ընդունելութեան դահլիճին մէջ, Մերսիք փողոց, Պէյրոս:

ԴԻՄԱՆ Ս. Ա. Շ. ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵՂՈՆԱԿԱՆ ՍԱՐՄԻՆԻ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵՍ ՓՐԿԻՉ ԵՎԵՂԵՑԻՈՅ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ. ՀԵՌ. 01 - 261505

ՏՈՒ ԱՍՏՈՒԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՄՈՒՄ ԶՐԻՍՏՈՒՄ

Ս. Փրկիչ Եկեղեցւոյ ժողովրդապետութիւնը սիրով կը հրաւիրէ հաւատացեալ ժողովուրդը մասնակցելու հայրապետական հանդիսաւոր Ս. պատարագին, զոր պիտի մատուցանէ եւ աւուր պատշաճի քարոզէ՝

ԱՄԵՆ. ԵՒ ԳԵՐՁ. ՏԵՐ ՆԵՐՍԷՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ.

(Կարողիկոս-պատրիարք կարողիկէ Հայոց)

6 Յունուար 2002, առաւօտեան ժամը 10:00ին:

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱՉՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԻՆՉՊԵՍ ԳՈՐԾԱԾԵՑ FUEL CARD-Ը

Ձեր ինքնաշարժին պէնզինին, մագնիսին, իւրին, ինչպէս նաեւ լուալու համար, վաճարումին հետ միաժամանակ ներկայացուցէք FUEL CARD-ը, այս ձեւով ձեր մասնակցութիւնը բերած կ'ըլլաք տնտեսական ծրագիրներու յաջողութեան:

ԻՆՉՊԵՍ ՍՏԱՆԱԿ FUEL CARD-Ը

FUEL CARD-ը կրնաք ստանալ հետեւեալ կեդրոններէն.՝

- ԱՅՇԼԻ գրասենեակ, Պուրճ Համուտ
- Համազգայինի գրախանութ, Պուրճ Համուտ
- Գրատուն Caravelle, Չալքա
- Գրատուն Sava, Այնճար
- Գրատուն Կոմիտաս, Պէյրոս
- Obelisk հաստատութիւն, Անթիլիաս

ՅԱՆԵԼԵԱԿ ԿԱՅԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԵՉ

1. CORAL JAL EL DIB, Ժլ Էլ Տիպ
2. HYPCO ANTELIA, Հարաք Ալ Ղաւարն
3. SPEED ANTELIA, Կարողիկոսարանի դիմաց
4. CORAL BAABDAT, Պապուր մայրուղի
5. SPEED ACHRAFIEH, Էլ Լահիբ PEUGEOT ընկ. առաջ
6. HYPCO HAMRA, Պանք Տի Լիպանէն առաջ
7. MEDCO KARANTINA, Զարաբիճանի մայրուղի
8. CORAL BHAMDOUN, Ղաւարնի մայրուղի
9. CORAL MAR MIKHAEL, Մար Սիխայէլ, Սաատ պողոտայ
10. SPEED ALITTIHAD, Կալէրի Իթթիաս
11. MANAR FANAR, Ֆանար, Նաւոր պանդոկին կից
12. CALTEX ANJAR, Այնճար
13. BASSIL DORA, Տորայի կամուրջ
14. ՀԱՅԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆ, Տորայ, «Ալմագ»-ի կից
15. ՍԱՐԳԻՍԵԱՆ ԿԱՅԱՐԱՆ, Պուրճ Համուտ, Սիւն Էլ Ֆիլի մայր պողոտայ

Յաւելեալ մանրամասնութեան համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

Մազուլի սպասարկութեան համար հեռաձայնել՝ 04-715111, 04-715222 եւ 04-715333 թիւերուն:

ԵՐՏԸ ԿԸ ՍՏԱՆԱԿ ԶՐԻՈՐԵՆ

ԱՐԺԷՔՒՐ ՆՈՒԷՐՆԵՐ ԵՒ ԻՆՔՆԱԾԱՐԺ ՄԸ

ԼԱԻԱԳՈՅՆ ՄՏԱԾՈՒՄԸ ԿԵՐՋԻՆ ԿԱՅՐԿԵԱՆԻՆ

\$269

\$119

Model 21D3XMJ 21inch FLAT

2 Head VCR Model V-E28 \$119
4 Head VCR Model V-E38 \$149

ԱՂԱՍԱՐԳԻՍԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ Պուրճ Համուտ, Զաղաքապետարանի հրապարակ, հեռ. 241000

ԵՐՏԸ ԿԸ ՍՏԱՆԱԿ ԶՐԻՈՐԵՆ

ԱՐԺԷՔՒՐ ՆՈՒԷՐՆԵՐ ԵՒ ԻՆՔՆԱԾԱՐԺ ՄԸ

ՔԱՋԱՐԱՆԻ ՓԱՊՈՒՂԻՆ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԿԸ ՍԿՍԻ ԱՅՍ ՏԱՐՈՒԱՆ ՎԵՐՋԱՒՈՐՈՒԹԵԱՆ

Հայաստանի նախագահ Ռոպերթ Քոչարեանի իրան կատարած պաշտոնական այցելության առիթով ստորագրուած շտաբի 12 փաստաթուղթերէն ամէնէնէն կարեւորներէն մէկն էր Քաջարանի փապուղիին կառուցման յուշագիրը:

Ըստ Հայաստանի փոխարտւածութեան եւ կապի նախարարութեան լրատուական ծառայութեան, Քաջարանի փապուղիին, որուն երկարութիւնը պիտի ըլլայ 3 քիլոմետր, իրանէն Հայաստան կատարուող բեռներու փոխադրման ճամբուն 12 քիլոմետրով կրճատման կարելիութիւն պիտի ընձեռէ, ինչպէս նաեւ 500 մետրով պիտի իջեցնէ բարձր լեռնային ճամբուն ընդհանուր մակարդակը:

Փապուղիին կառուցումը պիտի իրականացուի երկու երկիրներուն ֆինանսաւորմամբ՝ իրանական կողմի 85 առ հարիւր եւ հայկական կողմի 15 առ հարիւր մասնաբաժիններով: Ծրագիրին ընդհանուր արժէքը պիտի կազմէ 42 միլիոն տոլար:

Ըստ Հայաստանի փոխարտւածութեան եւ կապի նախարար Անդրանիկ Մանուկեանի, փապուղիին կառուցումը հաւանաբար սկսի 2002 թուականի վերջաւորութեան, իսկ մինչ այդ անհրաժեշտ է լուրջ աշխատանք տանել ծրագիրին նախագծային եւ նախահաշուային փաստաթուղթերու մշակման ուղղութեամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՆՈՐ ԴԵՍՊՈՒՆԱՏԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ ՍՏԱՆՁՆԱԾ Է «ՃԷՅ. ԷՅ. ՃՈՆՁ» ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու նոր դեսպանատան կառուցումը ստանձնած է ամերիկեան «ՃԷՅ. ԷՅ. ՃՈՆՁ» շինարարական ընկերութիւնը, որ միաժամանակ ամերիկեան դեսպանատունը պիտի կառուցէ նաեւ Պուկարիոյ եւ Նիկիթիոյ մէջ:

Նոր դեսպանատունը պիտի ընդգրկեն արդարադատ ատենանի յատուկ կառոյցներ, եւ դեսպանատան յատուկ գանդակ բաժանմունքներ: Անոնք նաեւ օժտուած պիտի ըլլան ամերիկեան արտաքին գործոց նախարարութեան ապահովութեան նորագոյն դրութիւններով Պուկարիոյ եւ Հայաստանի դեսպանատուններուն կառուցման համաձայնագիրները նաեւ կ'ընդգրկեն ձեւաւորումի բաժինները:

ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐԻ ԿԻՍԱՆ ԴՐԻՒ ԲԱՅՈՒՄ՝ ՆՈՒՊԱՐԱՇԷՆԻ ՄԷՋ

26 Դեկտեմբերին Երեւանի Նուպարաշէն թաղամասին մէջ տեղի ունեցած է հայ մեծ բարերար Պօղոս Նուպար Նուպարեանի (Նուպար Փաշա) կիսանդրիին պաշտօնական բացումը:

Պօղոս Նուպար հայկական իրականութեան մէջ մեծ դերակատարութիւն ունեցած է իբրեւ հայրենասէր բարերար: Եւրոպայի նշանաւոր համալսարաններուն մէջ ուսում ստացած Պօղոս Նուպար ըլլալով ժամանակաշրջանի զարգացած անձնաւորութիւններէն, բարձր պատասխանատու պաշտօններ ստանձնած է Եգիպտոսի կառավարութեան մէջ եւ անգնահատելի օգնութիւն ցուցաբերած է եգիպտահայ համայնքին: Անոր բարեսիրական աշխատանքները չեն սահմանափակուած Եգիպտոսի մէջ, այլ տարածուած են Սփիւքի եւ Երեւանի մէջ եւս:

Պօղոս Նուպարի քանդակին հեղինակն է Տիգրան Արզումանեան, իսկ ճարտարապետը՝ Էդիկ Աբաղեան: Անիկ կառուցուած է նուպարաշէնի Օննիկ Երանոսեանի հովանաւորութեամբ:

Բացման հանդիսութեան ընթացքին Պօղոս Նուպարի տարած գործունէութեան մասին խօսած են Հայաստանի մէջ Եգիպտոսի դեսպանը եւ արուեստագէտ Վարդուհի Վարդեբեան: Երեւանի քաղաքապետ Ռոպերթ Նազարեան զնահատած է այս նախաձեռնութիւնը եւ զայն նկատած է սերունդներ դաստիարակող:

ՆՈՐ ԵՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

«ԱՆ ԴՐԿՈՎԿԱՍ - ՄԻՋԻՆ ԱՐԵԻԵԼՔ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԿԱԶՄԱԻՈՐՈՒՄԸ»

Հայաստանի գիտութիւններու ազգային ակադեմիայի արեւելագիտութեան հիմնարկը հրատարակած է պատմական գիտութիւններու դոկտոր, փրոֆ. Նիքոլայ Յովհաննիսեանի «Անդրկովկաս - Միջին Արեւելքի աշխարհաքաղաքական տարածաշրջանի կազմաւորումը» գիրքը: Ան կը ներկայացնէ Անդրկովկասի եւ անոր յարակից շրջաններուն մէջ տեղի ունեցող աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական գործընթացները:

Հեղինակը ըսած է, թէ իր հիմնական նպատակը եղած է ներկայացնել Անդրկովկաս - Միջին Արեւելք շրջանի մեծ պետութիւններուն, յատկապէս Թուրքիոյ շահագրգռութիւնները:

Վ. ԽԱՉԱՏՐԵԱՆ ՄՏԱՀՈԳ Է ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵԼԵԻՄՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԵՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵՆԸ

Հայաստանի ելեւմուտքի նախարար Վարդան Խաչատրեան յայտարարեց, թէ գոհ չէ Միջազգային դրամական ֆոնտէն եւ Համաշխարհային Դրամատունէն, որոնք չեն վճարած համաձայնուած փոխառութիւնները: Ան Հանրային պատկերասփիւռի կայանէն յայտնած է, թէ Հայաստան ամբողջացուցած է Համաշխարհային Դրամատան կողմէ առաջարկուած պայմանները անցեալ տարուան Դեկտեմբեր ամսուան ընթացքին ստանալու համար 15 միլիոն տոլարի փոխառութիւնը:

Միջազգային դրամական ֆոնտին կողմէ Հոկտեմբերին Հայաստան կատարուած աշխատանքային այցելութեան մը ընթացքին ֆոնտին պատասխանատուները քննադատած են Հայաստանի մէջ տուրքերու հաւաքման ցած մակարդակը եւ ընդհանրապէս երկրին հարկային դրու-

թիւնը: Հայաստան ըսած էր, թէ 2001ի վերջին քառորդին բարելաւուած է իր ելեւմտական կացութիւնը: Նշենք, որ 94,6 միլիոն տոլարի տուրքերէն գանձուած է միայն 7 միլիոն տոլարը: Հայաստանի նախագահին գրասենեակին

մէկ յայտարարութեան համաձայն, նախագահ Ռ. Քոչարեան չէ բաժնած Վ. Խաչատրեանի մտահոգութիւնները եւ կառավարութիւնը պիտի շարունակէ միջազգային ելեւմտական կազմակերպութիւններու հետ իր գործակցութիւնը:

ԵՐԵՒԱՆԵՐՈՒ ՈՐԴԵԳՐՄԱՆ ՀԱՐՑԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Հայաստանի կառավարութիւնը իր անցեալ տարուան 26 Դեկտեմբերի նիստին կայացուցած է «Աջակցութիւն երեխաներուն» հիմնադրամ ստեղծելու մասին որոշում մը: Լրագրողներուն հետ զրոյցի մը ժամանակ մեկնաբանելով այդ որոշումը՝ Հայաստանի արդարադատութեան փոխ նախարար Գ. Մալխասեան նշած է, որ հիմնադրամ երեխայ որդեգրելու ուղղակի հայաստանցի եւ օտար քաղաքացիներուն կրնայ իրաւաբանական ծառայութիւններ մատուցել: Անոր զննչատեմամբ, որդեգրման ենթակայ երեխաներու թիւը շատ աւելի փոքր է, քան՝ ինչ որ կը կարծուի հասարակութեան մէջ:

Ըստ Հայաստանի ընկերային ապահովութեան նախարար Ռազմիկ Մարտիրոսեանի, նախարարութեան համակարգին մէջ գործող 5 մանկատուններուն, կրթութեան եւ գիտութեան նախարարութեան համակարգին մէջ գործող եւ ոչ պետական մանկատուններուն, ինչպէս նաեւ կրթական ծրագիրներով աշխատող գրեթե թիկ դպրոցներու մէջ ներկայիս կան 12 հազար երեխաներ:

Ռ. Մարտիրոսեան լրագրողներուն յայտնած է, որ որդեգրուող երեխաներու 99 առ հարիւր կ'որդեգրուի հայազգի, ներառեալ սփիւռքահայ ընտանիքներուն կողմէ:

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

- Ս. Յակոբայ տօնից առիթով, եղած են հետեւեալ նուիրատուութիւնները: Տէր եւ տիկին Յակոբ Գարամուկեան, տէր եւ տիկին Թովմաս Գալոյեան, տիար ժան Ներսէսեան տէր եւ տիկին Յակոբ Ալլազան, տէր եւ տիկին Ռուբէն Պապիկեան մէկական ոչխար: Տէր եւ տիկին Հրայր Ծերուցեան 100 \$, տէր եւ տիկին Վահագն Դաւիթեան 100 \$, տէր եւ տիկին Լեւոն Թիւրպէտեան 300 \$, տէր եւ տիկին Վազգէն Չեքիճեան 100 \$, տէր եւ տիկին Գրիգոր Ծուճուցեան 200 \$, տիկին Սանտրիկ Էօթեցի 200 \$, տէր եւ տիկին Լեւոն Տէր Սարգիսեան 150,000 լ.:
- Տիկին Մարի Գորնիշեան գորգ մը 500 լ.՝ Ս. Յակոբ եկեղեցւոյ, մի ոմ 100 \$, տէր եւ տիկին Փիեռ Գուլաճեան 50 \$:

Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ - ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻ
ՀԱՅԱՇԷՆ
ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ

Այն ապագայները, որոնք կը փափաքին մատաղցու ոչխար նուիրել կամ փոխան մատաղի նուիրատուութիւն կատարել, թող բարեհաճին հեռաձայնել թաղականութեան գրասենեակ, հետեւեալ թիւերուն՝ 01-328474 եւ 03-538866:

Մատաղցու ոչխարները եկեղեցի պէտք է հասած ըլլան մինչեւ Ուրբաթ, 11 Յունուար 2002:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
 Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ - ԿԱՐԱՊԵՏ
 ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԳՈՎԵԼԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ ԱԸ «ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԻՆ ՈՒՐԱԿ ՆՈՐ ՏԱՐԻ» ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ



«Գայիանե» կը ներկայացնէ ռուսական պար մը:

Համազգայինի Լիբանանի Երջանային վարչութեան հովանաւորութիւնը վայելող եւ «Լեւոն Շանթ» մշակութային կեդրոնին մէջ գործող մանկապատանեկան չորս միաւորները «Արեգ» թատերախումբ (բեմադրիչ եւ ղեկըստիչ Վիգէն Ստեփանեան), «Գայիանե» պարախումբ (պարուստից Ֆելիք Յարութիւնեան), «Կարկաչ» երգչախումբ (խմբավար Զաքար Քէչիշեան) եւ «Թորոս Ռոսլին» կերպարուեստի ակադեմիան միասնաբար ստեղծեցին տօնական երեկոներ, Յակոբ Տէր Մելքոնեան թատերասրահին մէջ, «Ամբողջ աշխարհին ուրախ նոր տարի» թեմայով երաժշտախառն պատկերներու ներկայացումներ բեմադրելով (Դեկտ. 22 - Յունուար 2002):

Մաղթանք մըն էր համատարած, որ ունեցաւ պատգամային խորհուրդ, որ կը բխէր մանուկ եւ պատանի հայորդիներու շրջանէն, օրհնութեան պէս բարի եւ անկեղծ դրոշմով:

Ներկայ եղանք 28 Դեկտեմբեր 2001ի երեկոյթին, որ մեծ մասամբ յատկացուած էր ծնողներու, որոնք եկած էին խիտ շարքերով՝ ծափահարելու իրենց դեռատի հոգեհատորները, շնորհալի ու զեղեցիկ:

Բեմայարդարուած (Գօգօ Արփաճեան) հիանալի յղացումներով յազեցած էր, մասնաւորաբար՝ իւրաքանչիւր երկրի իւրապատուկ ռոմով ու աւանդութեան համապատասխան յարգանքով ճոխացած: Ներկայացման թեման կ'ընդգրկէր աշխարհի զանազան երկիրներու մէջ Նոր Տարին տօնելու աւանդական ձեւերն ու իւրապատուութիւնները: Մեր փոքրիկ դերակատարները, երգիչներն ու պարողները հերթով փոխադրուեցան Լիբանանէն դուրս՝ այցելելով ութ երկիրներ: Հայաստան, Եգիպտոս, Ամերիկա, Ֆրանսա, Իտալիա, Ռուսիա, Զինաստան եւ Հնդկաստան: Իւ-



Իտալական դիմակահանդէսը ներկայացնող «Կարկաչ»ի անդամները խմբուած՝ Չիլիկի, Փաթիլիս եւ Սագոյի շուրջ:

ըբանչիւր երկրի յատուկ ժողովրդային տարազներով պարող մեր մանուկները խանդավառութիւնը հասցուցին զագաթնակէտի, որուն արձագանդեց սրահ երկարատեւ եւ ջերմ ծափահարութիւններով: Այս յանդիպումի վրայ հարկ է յաւելուլ ութ ժողովրդային յատուկ երաժշտութիւնը, երգերն ու զրոյցները, պարողներուն եւ դերակատարներուն երփնեղանգ հանդերձանքները եւ տիպարներու հարագատութեամբ կ'ընկերանային ներկայացումին:

Ինքնավստահ ու համարձակ էին գրեթէ ըլլող մանուկները: Երկարատեւութեան արժանի են նաեւ թովմասեան (Սագօ), Աբասիա Փոլատեան (Փաթիլ), Սարո ժամկոչեան (ձիւնամարդ), Նօնի Մկրտիչեան (թատրոնի տնօրէն), Բիւզանդ Մկրտիչեան (հայր): Բոլորն ալ իրենց խանդավառ ու զեւարիչ խաղերով հանդիսականները փոխադրեցին երազային աշխարհ մը, որ չբացան բոլոր տեսակի տագնապները եւ մտահոգութիւնները:

Նշենք նաեւ բեմադրական աշխատանքին ներդաշնակ ընթացքը, արագ խաղարկութիւնը եւ տեքորներու ճշգրիտ փոփոխութիւնը:

Յաւուր պատշաճի բնաբան մը ունէր «Ամբողջ աշխարհին ուրախ նոր տարի» ներկայացումը, ստեղծագործութիւն՝ Վիգէն Ստեփանեանի, սակայն երբ երգողներ պարողներ ու պապայի յոյս - դերասաններ միացան, բեմը լեցուցին զուարթ կանչերով, կարծէք թէ չբացած բոլոր հոգերը կային միայն մեր ապագային համար յոյսեր ներշնչող մեր մատղազ գաւակները: անոնց փոխանցած «Ուրախ նոր տարի» մաղթանքը ընդունուեցաւ իբրեւ յոյսի վարար աղբիւր: Վարձքը կատար այս պատասխանատու եւ յոգնատանջ իրագործումը յաջողցնողներուն:

«ԱՉԳԱԿ» ԶԵՆՈՒԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
 «ԱՉԳԱԿ»ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն. -258526, 260115 եւ 241274:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԵՐԱՅՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Կը ներկայացնէ
Վ. ՍՏԵՓԱՆԵԱՆԻ

«ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԻՆ ՈՒՐԱԿ ՆՈՐ ՏԱՐԻ»
ԱՄԱՆՈՐԻ ՈՒՐԱԿ ԸՆԴԵՍԸ

Բեմադրութիւն՝ **Վիգէն ՍՏԵՓԱՆԵԱՆ**
 Պար՝ **ՏԵԼԻԵՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ**
 Երգ՝ **ԶԱԲԱՐ ԲԵՅԻՃԵԱՆ**

Մասնակցութեամբ՝ **Համազգայինի «ԱՐԵԳ», «ՊԱՅԻԱՆԷ», «ԿԱՐԿԱՉ»** եւ «**ԹՈՐՈՍ ՈՍԼԻՆ»** մանկապատանեկան միաւորներուն:

Ելոյթները կը շարունակուին Կիրակի 6 Յունուար 2002, կեսօրէ ետք ժամը 5:00ին: Երեկոյեան 4 Յունուար 2002, երեկոյեան ժամը 8:00ին, «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ:

● Տոմսերը կը վաճառուին՝ Գրատուն OBELIX (Անթիլիս), Համազգային Գրախանութ (Պուրճ Համուտ), Տիրաթք GEKA (Պուրճ Համուտ), Սթիւտիո ՎԱՉԷ (Հաճըն), Համազգայինի «Լ. Շաքար» կեդրոն (Պուրճ Համուտ) եւ Ելոյթի օրերը կը շարունակուին:

ԱՆՑԵԱԼԻ ԽՅԱՆԸ ԲԱՆԱԼՈՎ

ԸՆԻՆ ԽՄԻՉՁԵՆԵՐ ՎԵՐԱԿԵՆՆԱԿԱՑՆԵԼԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՍԵՋ ՐԱՃԵԼԻ ՃԱՍԲՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՍԸ ԿԸ ՊԱՐԳԵԻ

Անհկա փոքրիկ է, իւրաքանչիւր մոլեբերլը մէկ մեթրին մէկ միլիաոբորդ չափով, եւ կը բաղկանայ բնածուխի, սակայն արմատական ալըոլը (էթիլ) ժամանակին մէջ ճամբորդելու հրաշալի միջոց մըն է: Մարդիկ նախապատմական ժամանակներէն ի վեր սիրած են ոգելից ըմպելիները, որուն պատճառով խմելը վերածուած է արեւմտեան քաղաքակրթութեան մէջ հինէն ի վեր գոյատեւող երեւոյթի մը: Վաղուց անհնարացած մշակոյթներու արուեստը, երաժշտութիւնը կամ գրականութիւնը արժեքները տարիներու ուսումնասիրութիւն կ'ենթադրէ: Սակայն անոնց խմիչքները վերստեղծելը եւ գտնելը աշտուրուան մեր ճաշկանոցն ոգելից ըմպելիներուն բաղադրանքը անխնայ պարէն է, չըսելու համար՝ աւելի հաճելի: Ոգելից ըմպելիի գործածութիւնը այնքան տարածուած է պատմութեան մէջ, որ խմելը ձեւով մը «միջազգային լեզու» մըն է, ինչպէս կ'ըսէ Փենսիլվանիոյ համալսարանէն հնագէտ մը՝ Փեթրիք Մքլաուրըն:

Ոգելից ըմպելիներու նկատմամբ տարբեր մշակոյթներու մօտեցումը նաեւ պատմուհու մը կը բանայ ընկերային եւ մշակութային սովորութիւններու վրայ: Ոգելից ըմպելիները միշտ ի պատուի եղած են իրենց բժշկական ենթադրեալ յատկութիւններուն համար, թէեւ այս յատկութիւններուն իսկութիւնը եւ անոնցմէ լաւագոյն ձեւով օգտուելու միջոցները միայն արդի ժամանակներուն յտակացած են: Այլ խօսքով՝ պատմական խմիչքները բաւական պարզ են հասկնալու եւ արժեքները համար, սակայն բաւական տարբեր են, նոր բան մը սորվեցնելու համար այն ժամանակին եւ տեղին մասին, ուր առաջին անգամ գործածուած են: Անոնցմէ ոմանք կարելի է վերստեղծել նոյնիսկ տան մէջ, սովորական քաղաքիչինքով:

Աշխարհի ամէնէն հին ոգելից ըմպելիի խոհագիրը կը վերաբերի գարեջուրի պատրաստութեան: Անիկա արձանագրուած է 3800 տարուան կաւէ սալիկի մը վրայ, սուււրներէն գարեջուրի պատրաստութեան աստուած Նինքասիի նուիրուած աղօթքի մը մէջ:

Սուււրական արձանագրութիւններ, որոնց շարքին՝ Ն. Ք. 1720ին Համուրապի թագաւորին օրով պատրաստուած օրինագիրքը, կ'ապացուցեն, թէ գարեջուրը կարեւոր դեր ունեցած է Միջագետքի ծէսերուն, դիցաբանութեան եւ բժշկագիտութեան մէջ: Ընկերութեան բոլոր խաւերուն անդամները եւ գինեպանները պարտաւոր էին հետեւիլ խիստ օրէնքներու. օրինակ՝ սուր դրան պահանջողներուն պատիժը խեղդամահ ըլլալ էր:

Գարեջուրը Միջագետքի մշակոյթին կորիզը կ'արձանէր: Ջայն նոյնպէս կ'ըսէր Համարեւ մարդը արեւմտեան քաղաքակրթութեան հիմը: 1950ական տարիներուն ամերիկացի բուսաբան ձոնաթին Սորը յայտնած է այն կարծիքը, թէ հատիկներու ընտելացումն ու մշակումը (աշխիւքն՝ վաշկատուն կեանքէ դէպի կայուն կեանք անցումը) թերեւս գարեջուրը պատրաստելու եւ ոչ թէ հաց չինելու նպատակով սկիզբ առած է: Այնուհետեւ տարակարծութեան եւ վէճի նիւթ է, թէ հին ժամանակներուն գարեջուրը առաջ կու գար, թէ հացը:

ԱՆՑԵԱԼԵՆ ԲԱԺԱԿ ՍԸ

Անցեալի խմիչքները վերստեղծելը մտաւորական մարտահրաւէր մըն է, կ'ըսէ Մքլաուրըն:

Անհկա ճշգրիտ գիտութիւն մը չէ, եւ անոր արդիւնը կրնայ սորսափելի ըլլալ: «Սակայն կարելի է յաջողիկ պատրաստել համեմատելի խմիչք մը, անիկա կը նմանի անցեալը վերակենդանացնելու», կ'ըսէ ան: «Հին ժամանակներու խմիչքները իրական կը թուին մեզի հանդէպ ընդմիշտ թաղուած հնութիւններու չեն նմանիր»: Աւելի՛ն. անցեալի փոքր մէկ գործը վերստեղծելու կողքին, այժմ գտնակալ օրուերու ապացոյցներ կը փաստեն, թէ ալքոլի չափաւոր սպառումը կրնայ օգնել նաեւ ժամանակին մէջ դէպի առջեւ ճամբորդելուն, մինչեւ 40 առ հարիւր Համեմատութեամբ նուազեցնելով սրտի հիւանդութիւններու հաւանականութիւնը:

Բոլորին կենացը:

Ռաւելու Պայքանքիւնը

ՍՈՒՄԵՐԻ ԳԱՐԵՋՈՒՐ ՇԻՆՈՂՆԵՐԸ

Բուսաբան ձոնաթին Սորըի կարծիքը պաշտպանողները կը մատնանշեն, թէ հին ժամանակներուն մշակուած առաջին հատիկները եփելու յարմար չէին, սակայն կարելի էր գանոնք օգտագործել խմիչքի պատրաստութեան համար: Անոնք կ'ենթադրեն, որ գարեջուրը ստեղծուած է, երբ մարդիկ փորձած են վայրի գարին ուտելի դարձրնել ջուրը եւ պտուղներ խառնելով անոր: Այս ձեւով պատրաստուած թանձր խմիչքը նոյնքան անդաբար էր, որքան հացը, եւ քիչ մը ալքոլ կը պարունակէր:

Սուււրական արձանագրութիւններ այս տեսակէտը պաշտպանող վկայութիւններ կ'ընձեռեն: Թէեւ սուււրական գարեջուրը կը պատրաստուէր պափրոյով (հացի տեսակ մը, որ կարելի էր պահել երկար ժամանակ), սակայն մարդիկ զայն կը սպառէին միայն այն ատեն, երբ ուտելի այլ բան չգտնէին: Այլ խօսքով՝ պափրոյ գլխաւորաբար կը ծառայէր գարեջուրի պատրաստութեան անհրաժեշտ հում նիւթերը լաւ վիճակի մէջ պահելու:

Թէ՛ գարեջուրը իրապէս հիմն է արեւմտեան քաղաքակրթութեան, այս ատիկա կը բացատրէ անոր վայելած բարձր դիրքը սուււրական մշակոյթին մէջ: Ն. Ք. 2600ին Ուրբաքը թագուհի տիկին Փու-Ապիի կնիքը զայն կը պատկերէր եղէգով գարեջուր խմելու պահուն: Անոր դամբարանէն գտնուած է ոսկորով եւ կիսաթանկագին լազուրով քարով չինուած նման եղէգ մը, որ այժմ կը ցուցադրուի Բրիտանական թանգարանին մէջ:

Իսկ Ուրի մէջ պատրաստուած այս գարեջուրը ի՛նչ համ ունէր: Նինքասիի խոհագիրին հետեւողութեամբ սուււրական գարեջուրը պատրաստելու բազմաթիւ փորձեր կատարուած են: 1990ական տարիներու սկիզբը Սան Ֆրանսիսքոյի «Եքքըր» գարեջրատունը երկու անգամ սուււրական գարեջուր պատրաստած է, սակայն չէ վաճառած զայն:

Պատրաստողները ստիպուած էին բազմաթիւ ենթադրութիւններ ընել: Գարեջուրի մասնագէտ Մայքըլ ձէքսըն, որ տարիներու ընթացքին սուււրական խոհագիրներու հետեւողութեամբ չինուած սուււրական գարեջուրեր համեմատած է կ'ըսէ, թէ ներկայիս

գարեջուր պատրաստողներ կը խուսափին վայրի մակարդի գործածութենէն, որ հնադարեան գարեջուրերուն կու տար գինիի եւ լեղի համ: Այլ հարց մըն ալ այն է, կ'ըսէ ան, որ չենք գիտեր, թէ հնադարեան գարեջուրի տեսակներուն մէջ ի՛նչ նիւթեր գործածուած են բարեխառնելու համար հատկի համը: Թերեւս պտո՞ւղ կամ մե՞ր:

Ասիկա կը նշանակէ, թէ մեզի ծանօթ գարեջուրի բազմաթիւ տեսակներ կը նմանին հնադարեան տարբերակներուն: Օրինակ, պելեօ-նիօնական կարգ մը գարեջուրներու պատրաստութեան համար կը գործածուի վայրի մակարդ, Ֆինլանտական գարեջուր մը՝ Սաճիին, օժտուած է հաղարջի համով: Մայքըլ ձէքսըն զայն կը համարէ «Եւրոպայի մէջ ցարդ գոյատեւող նախնադարեան միակ գարեջուրը»: «Էնքըր» գարեջրատան պատրաստած Նինքասիի գարեջուրը մեղրաջուրի համ ունի: Նոյն խոհագիրին հետեւողութեամբ չինուած այլ գարեջուր մը կը յիշեցնէ Փրանսական ճաշը:

Գարեջուրին, գինիին եւ մեղրաջուրին միջեւ տարբերութիւնները կը նսեմանան, երբ մեղր ու պտուղներ կ'աւելցուին անոնց վրայ, բարդացնելով իւրաքանչիւրին առանձնապատկութիւնները: Աւելի՛ն. այսօրուան թուրքոյ կեդրոնական շրջանէն, հաւանաբար Միտաս թագաւորին դամբարանէն յայտնաբերուած են Ն. Ք. 700 թուականի խմիչքի կարասներ, որոնց վրայ կատարուած ուսումնասիրութիւնները ցոյց կու տան, թէ հին ժամանակ մարդիկ հաւասար քանութեամբ գարեջուր, գինի եւ մեղրաջուր իրարու խառնելով չինած են առաջին «քեքթէլը»:

Կը թուի, թէ նմանօրինակ խմիչք մը ընդհանրացած է կրետէի Միտասներու քաղաքակրթութեան մէջ, Ն. Ք. 1500ին: Այժմ հնագէտ Փեթրիք Մքլաուրըն կը գործակցի կրետեցի գինեգործի մը հետ, վերստեղծելու համար այս խմիչքը: Այս օրերուն կը խտրուի գարեջուր մը, որ կը պարունակէ 6 տեսակ գինի, համեմտեւ, մեղրաջուր եւ գարեջուր: «Էն Բրաֆր» գարեջրատան անցեալ Յունիսին Մքլաուրընի յայտնաբերումներուն հիմամբ շուկայ իջեցուց «Միտասի հպուլ» անունով գարեջուր մը:

ԿԱԼԷՆԻ ԳԻՆԻՆ (ՀՌՈՄ, Յ. Ք. 170)

Մարքոս Օրիլիուսի բժիշկը՝ Կալէն Փերկամուցին Յ. Ք. երկրորդ դարու վերջերին, օր մը, իջած է Հռոմի կայսերական մտուանները եւ համասած է գինիի բոլոր տեսակները:

Կայսերական բժիշկ նշանակուելէն առաջ Կալէն ծառայած էր սուսերամարտիկներու դպրոցի մը մէջ, ուր յատնաբերած էր գինիին բժշկական դերը վէճերը հակահեկնելու մէջ: Կալէն նաեւ կը հաւատար, թէ գինին չափազանց ազդու դեր մըն էր: Հետեւաբար, երբ ան կայսեր համար բուժելը շինուէր մը պիտի պատրաստէր, մտածած էր, թէ անիկա պէտք էր հիմնուած ըլլար աշխարհի լաւագոյն գինիին վրայ: «Որովհետեւ աշխարհի ամէն կողմերէն լաւագոյն բաները իրենց ճամբան կը գտնեն դէպի աշխարհի մեծերը», գրած է ան: «Ամէնէն գերազանց բաներէն հարկ է ընտրել լաւագոյնը, ամէնէն գերազանց հակին համար ձեռքը: Հետեւաբար ան իջած է մտաւանները, պատմութեան մէջ գինիի ամէնէն համապարփակ համատեւումը կատարելով:

Հռոմէական ժամանակներուն ընդունուած իրողութիւն էր, որ լաւագոյն գինին կու գար Նափոլիի մօտակայ Ֆալերնեանի շրջանէն: Իրօք, գինիի անուներու ֆրանսական աւանդութիւնը կու գայ Ֆալերնեան գինիի երեք տեսակներէն: Քոնքինեան Ֆալերնեան գինին կը պատրաստուէր Ֆալերնուս լեռան բարձրաբերձ լանջերուն այգետաններէն:

Ֆաուստինեան Ֆալերնեանը կու գար լեռան կեդրոնական լանջերէն, իսկ ստորոտի այգիներուն գինին ծանօթ էր պարզապէս Ֆալերնեան անունով:

Արդի ճաշակներուն համար գարմանալի կրնայ թուիլ, որ ամէնէն յարգի Ֆալերնեան գինին ճերմակ էր: Հռոմէական աղբիւրներ կը նշեն, թէ այս գինիին խաղողը բաւական ուշ կը քաղուէր, եւ արդիւնքը կ'ըլլար թուրեղ բայց քաղցր եւ ոսկեգոյն գինի մը, զոր կարելի էր տասնամեակներ պահել: Այս գինիին ամէնէն մօտիկ նմանակալից տարբերակները Շաթո-Տիքմի նման երկար պահուած ճերմակ գինիներն են: Սակայն Ֆալերնեան գինին շատ տարբեր համ մը ունեցած ըլլալու է բազմաթիւ պատճառներով: Սկիզբը անիկա որոշ ժամանակ մը կը ձգուէր, որ դեղին, ապա կը ստանար սադի գոյն, կամ սրճագոյն կը գառնար: Այսօր զայն համարուող նաեւ պիտի գզայ կարծախտի կամ ձգուածի համ մը հռոմէացիք այս նիւթերով կը ծեփէին գինիի յախճապակեայ կարասները, զանոնք ջուրի դէմ պաշտպանելու համար:

Սակայն հռոմէական եւ արդի գինիներուն միջեւ ամէնէն ուշագրաւ տարբերութիւնը այն է, որ հռոմէացիք երբեք զայն առանձին չէին խմեր եւ տարբեր նիւթեր կը խառնէին անոր մէջ:

Իրօք, գինին առանձին խմելը բարբարոսութիւն կը համարուէր: Շատ յաճախ պարզապէս

ջուր կը խառնուէր գինիին: Ջուրին քանակութիւնը կախեալ էր հիւրընկալին տրամագրութենէն, ինչպէս նաեւ՝ օրուան ջերմաստիճանէն: Սովորաբար մէկ չափ գինիին երեք չափ ջուր էր խառնուէր: Գինին թթեւեղութիւնը երկու նպատակի կը ծառայէր. զայն կը վերածէր ծառուր լազեցնող խմիչքի, զոր կարելի էր սպառել մեծ քանակութեամբ, իսկ ալքոլը ինքնին կը հակահեկնէր վերջը, զոր կարելի էր սպառել որ հռոմէական կայսրութեան հետզհետէ աճող քաղաքներուն մէջ, ինչպէս հետագային՝ 18րդ դարու Շեռոպայի մէջ:

Հռոմէացիք գինին թթեւեղութիւնը նպատակով երբեմն ծոփու ջուր կը խառնէին անոր: Հռոմէական գինիի մասնագէտներէն՝ Պրիսիլի երեցին համաձայն, ասիկա կը ծառայէր «վերակենդանացնելու գինիին ողորկութիւնը»: Սակայն հռոմէացիք միայն ջուր չէին խառներ գինիին: Երբեմն զայն պաղեցնելու համար ձիւն կ'աւելցնէին, կամ մեղր՝ պատրաստելու համար մուսուլմաններով ախորժաբեր մը: Անոնք սովորաբար տարբեր բույրերով էւ համեմունքով կը փորձէին խմելի դարձնել քացիացած գինին եւ թթեցնել անոր բարկ համը: Գինին լաւ վիճակի մէջ պահելը դժուար էր հռոմէական ժամանակներուն: Հետեւաբար գինիներուն մեծամասնութիւնը կը սպառուէր մէկ տարուան ընթացքին: «Հին» կ'որակուէին մէկ տարիէն աւելի դիմացող գինիները:

Գինիի սիրականը մը ըլլալով՝ շատ հաւանաբար Կալէն հռոմք գզացած էր կայսերական մտուաններուն մէջ լաւագոյն Ֆալերնեան գինին փնտռելով: Ան նախ համեմատած է 20 տարեան Ֆալերնեան գինիները եւ աստիճանաբար՝ աւելի հին արտաբերութիւնները: «Շարունակեցի համեստել, մինչեւ որ գոտայ որեւէ բարկ համէ գերծ գինի մը: Լաւագոյն գինին այն հին գինին է, որ չէ կորսնցուցած իր անուլութիւնը»: Կալէն ի վերջոյ ընտրած է Ֆաուստինեան Ֆալերնեան գինին, իբրեւ աշխարհի լաւագոյնը: Սակայն դժբախտաբար ան չէ արձանագրած առեւտրակ գինիին պատրաստութեան թուականը:

Հռոմէական աւելի կանուխ ժամանակներուն հարցախոյզի մը արդիւնքը ցոյց տուած էր, թէ Ն. Ք. 121ի Ֆալերնեան գինին լաւագոյն էր: Պրիսիլիի համաձայն, այս գինին տակալից կը խմուէր 160 տարի ետք, երբ անիկա հրաձգուած էր Գալիկոյի կայսեր: Հետեւաբար հաւանական է, որ Կալէն համեմատած է մինչեւ 200 տարուան Ֆալերնեան գինիներ, որոնք տակալին կը պահուէին իր փնտռուելին ժամանակ:

Թէեւ Ֆալերնեան գինին հռոմէական լաւագոյն գինին էր, սակայն Կալէնի նման հռոմէացիներու սովորական խմիչքը չէր: Իսկ

Շարք՝ էջ 8

ՇԵՅՔՍՓԻՐԻ ՍՊԱՆԱԿԱՆ ԳԻՆԻՆ (ԱՆԳԼԻԱ, 1598)

Սըր Ֆրենսիս Երէյք 19 Ապրիլ 1587ի յետմիջօրէին 31 մարտանաւերէ բաղկացած իր նաւատորմը առաջնորդեց դէպի Քատիգի նաւահանգիստը, ուր սպանական նաւեր կը պատրաստուէին յարձակելու Անգլիոյ վրայ եւ գրաւելու զայն: Սպանացի նաւակալի կողմէն մըն էր Սրէյքի նաւագնները անմիջապէս կողոպտեցին, խորտակեցին եւ այրեցին սպանական մարտանաւերը: Նաւահանգիստին շտեմարանները պարպել է եւ սպանական յարձակուողներ ինքիսլ ետք, Սրէյքը իր նաւերով խոյս տուաւ առանց ոեւէ զոհ տալու: Ան իբրեւ ազգային հերոս վերագրուեց Անգլիա: Այնուհետեւ անոր յանդուգն յարձակումը ճանչցուեցաւ իբրեւ «Սպանիոյ թագաւորին մօրուքը խանձելու» պատմութիւն:

Անգլիան գրաւելու սպանական ծրագիրը քանի մը ամիս կանխելով՝ Սըր Ֆրենսիս Երէյքի յաղթանակը նաեւ կնքեց նոր խմիչքի մը յանդուլութիւնը: Անգլիացիք Քատիգի շտեմարաններէն իբրեւ աւար տարած էին սպանական գինիի (սէք) 2900 հսկայ կարասներ:

Այս գինին կը պատրաստուէր Սպանիոյ Ժերոն քաղաքին մէջ եւ այսօրուան սպանական գինիին (չէրի) նախակարգուած էր: Անոր Բոլորպարականութիւնը սկիզբ առած է 1491ին հըրդոպարականութեւ օրէնքով մը, որուն համաձայն, Սպանիոյ մէջ արտածուած համար պատրաստուած գինին գերծ կը կացուցուէր պետական տուրէր: (Սէք բառը սերած է սպաներէն սաքար բառէն, որ կը նշանակէ արտածել): Ժերոնի գինեգործները շուկաներ կը փռնուէին ծոփերէն անդին եւ իրենց գինին յաղողութիւն գտած էր Անգլիոյ մէջ: 1587ին, երբ Սրէյք իր յաղթանակը նաւատորմին հետ այս գինին Քատիգին տարաւ Անգլիա, անիկա շատ աւելի Բոլորպարականացաւ եւ դարձաւ օրուան նորաձեւութիւնը, հակառակ որ թշնամիին արտաբերութիւնը էր:

Քիմիական թաքուն առանձնապատկութեամբ մը՝ սպանական գինին դիմացուցու էր եւ զայն արտասովոր կերպով երկար կարելի էր պահել: Հետեւաբար անիկա երկարատեւ ծովագնացութիւններու իտեղալ գինին էր: Նման ճամբորդութիւններու ընթացքին ոգելից ըմպելիները կենսական էին ընկերային մթնոլորտ ստեղծելու համար: Անոնք նաեւ տանելի կը դարձնէին շաքարներ շարունակ խնդրուած նաւու մը մէջ ապրելու դժուարութիւնները:

1490ական տարիներուն, դէպի նոր աշխարհ իր ծովագնացութիւններուն ընթացքին, Քո-

լովպոս իրեն հետ սպանական գինիի կարասներ տարած էր: Իրօք, այս գինին առաջինն էր, որ մուտք գործած է ամերիկեան ցամաքամաս: 1519ին, երբ Մակելան իր նաւով ճամբայ ելած է աշխարհի շրջանը ընելու, աւելի շատ ծախսեր կատարած է գինիի պահեստներ, քան թէ՛ գինամթերք գնելով:

Սակայն սպանական գինին ամէնէն աւելի Ժողովրդականութիւն կը վայելէր Անգլիոյ մէջ: 1598ին Շէյքսպիրի ամէնէն հուշակաւոր ստուրքը մտուեցած է անոր: «Հենրի 7.» թատերութեան երկրորդ արարին մէջ Ֆոլսթաֆ գայն կը գովաբանէ երկարաշունչ ճառով մը եւ կ'եզրակացնէ. «Եթէ հազար ողբի ունենալին, սկզբունքը: Հրաժարիլ թթեւ խմիչքներէ եւ դառնալ սէքի մոլին»:

Ասիկա անշուշտ ժամանակի սխալ մը կը բովանդակէր. թատերգութիւնը տեղադրուած էր սպանական գինիին Անգլիա հասնելէն շատ առաջ: Սակայն փորձութեան կարելի է մատնուիլ եզրակացնելու համար, թէ Ֆոլսթաֆի բառերը կ'արտացոլեն ինքնին Շէյքսպիրի սպանական գինիի սէքը, զոր կը բաժնէին շատեւ: Անոր ժամանակակից թատերագիրներ Բրիտիսթաֆը Մարթո եւ Պէն Ժանսըն սէքի նուիրուած չափածոյ բանաստեղծութիւնները գրած են: Մարթո հաւանաբար սպանական գինի կը կոնծէր այն գիշերը, երբ սպանուած է գինետան մը մէջ ծագած կաւիւր մը ընթացքին:

Սպանական սէքը պաշտօնապէս ճանչցուած էր 1604ին, երբ Անգլիոյ ձէյմս Ա. թագաւորը հրապարակած է իր պալատին մէջ անոր սպառումը սահմանափակող հրամանագիր մը:

«Նկատի ունենալով, որ մեր ազնուականներէն շատերը եւ ուրիշներ յաճախ կը ճաշեն եւ կը գիշերեն մեր պալատին մէջ, եւ իրենց առողջութեան համար կ'ըզգեն սէք խմել, մեզի համար հաճուք է մեր մտաւասակներին յանձնարարել, որ օրական 12 կալուն գինի տրամադրէ անոնց, բայց ոչ աւելի»:

Այս ժամանակներուն սէքը արդէն ծանօթ էր չէրիսսէք անուանով (չէրիսը սպաներէն Ժերոն գառնի աղաւաղումն էր), եւ ուրկէ սերած է արդի ժամանակներու չէրի անուանը:

Շարք՝ էջ 10

Պատրաստեց՝ Լ. ԿԻՒՈՅԵԱՆ-ՍՐԱՊԵԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ



ՊԱՍՔԵԹՊՈԼ

Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՂՋԻԿՆԵՐԸ ՊԱՐՏՈՒԵՑԱՆ ՍԱՏԱՔԱՅԵՆ

Լիբանանի պատերազմի աղվակնաց Ա. դասակարգի ախոյանություններն 11րդ հանգրուանին իր կատարած մրցումին, երեկ Հ.Մ.Ը.Մ.Ի ներկայացուցչական կազմը Սատաքայի դաշտին վրայ իր կատարած մրցումին, 56-43 արդիւնքով պարտութիւն մը կրեց Սատաքային:

Երթի (երկրորդ անգամ ըլլալով) 2րդ հանգրուանին, Հ.Մ.Ը.Մ.Ի յաջորդ մրցակիցը պիտի ըլլայ ՊուՍՄարզը: Մրցումը տեղի պիտի ունենայ Կիրակի, 6 Յունուարին, Հ.Մ.Ը.Մ.Ի «Թնուկեան» մարզադաշտին վրայ, ժամը 18:00ին:

2002ի ՉՄԵՆՆԱՅԻՆ ՈՂԻՄՊԻԱԿԱՆԻՆ ՆԱՌՕՐԵԱԿԻՆ

ՌՈԿԸ ԿԸ ՄՆԱՅ ՄՏԱՀՈԳ

Միջազգային Ողիմպիական կոմիտէի նախագահ պեճիթայի Ժաք Ռոկը, անցնող քանի մը օրերուն ընթացքին գերմանական «Սուէտեօյ Ցայթունկ» օրաթերթին հետ իր կատարած հարցազրոյցին ընթացքին յայտնեց, թէ «Թմբեցուցիչի գործածութեան դէմ մեր մղած պատերազմը երբեք չենք կրնար շահիլ, սակայն մեր ամէն կարելին պիտի փորձենք եւ անկարելին կարելի պիտի դարձնենք մարզական աշխարհէն հեռու պահելու համար նմանօրինակ բան փորձող ըստրոմարգիներն ու թէլիքները, մեր կողմէ կատարուած անհակակա քննութիւններուն ընթացքին»:



Ժաք Ռոկը

Յառաջիկայ ամիս Սալթ Լէյք Սիթիի (Մ. Նահանգներ) մէջ տեղի ունենալիք 2002ի Չմեռնային Ողիմպիականին անդրադառնալով, ան ըսաւ, թէ կը մնայ մտահոգ, հակառակ անոր որ ամերիկացիք մարզկային ամէն տեսակի ճիգերը ի գործ կը դնեն անախորժ որեւէ միջադէպի մը կամ անսպասելի արկածի մը առաջը առնելու համար:

«Հակառակ մեզի տրուած մեծ խոստումներուն, դժբախտաբար սակայն մինչեւ փակման հանդիսութիւնը պիտի մնամ մտահոգ եւ ջղային», կ'ըսէ Ռոկը:

ԹԵՆԻՍ

ՔՈՒՐՆԻՔՈՎԱՅԻ ԴԺՈՒՄՐ ԶԱԼԹԱՆԱԿԸ

Իր ասպարէզին ընթացքին ցարդ ոչ մէկ տիտղոսի տիրացած ուսու բեճիսվումը Աննա Քուրնիքովա երեկ «Օբլընտ Քլաւիք» մրցաշարի քառորդ աւարտականին հազիւ կրցաւ պարտութեան մատնել գուրեցերիցի իմանուէլ Բալիարտին՝ 2-6, 6-4 եւ 7-5 արդիւնքով:

Քուրնիքովա մրցումին ետք յայտարարեց, թէ ինքզինքը ամօթով կը զգայ, որ աշխարհի ընդհանուր դասակարգման մէջ 69րդ դիրքը գրաւող Բալիարտիի դէմ այդպիսի դժուար արդիւնք մը կ'արձանագրէ:

Կիսաւարտականին ան իր դէմ պիտի ունենայ Աննա Սմաշնովան (Իւրալի):

Կիսաւարտականի երկրորդ մրցումը տեղի կ'ունենայ Միլվիա Թալատայի (Նրուսիա) եւ Թաթիանա Փանովայի (Ռուսիա) միջեւ:

ՉՄՄԱՌՈՒ ՏԻՐԱՄՕՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԺՈՂՈՎՐԴՊԵՏՈՒԹԻՒՆ
ՉՄՄԱՌ. Հեռ. 09/262706 կամ 09/262664
ԺՈՒՆԻԻԲ. Հեռ. 09/935188 կամ 09/636671

Ի ՏՈՒՆ ԶԱՅՆՈՒԹԱՆ Տ. Ս. Յ. ԶՐԻՍՏՈՍԻ

Պիտի պատարագ եւ Ջորժիտէ կատարի ԳԵՐՊ. Հ. ԵՂԻԱԹ. Մ. Վ. ԵՂԻԱՅԵԱՆ

Յառաջիկայ Կիրակի, 6 Յունուար 2002, կեսօրու 12:30ին, Ժուճիկի Չմառու վանքին մասին Ընծայարանի մատրան մէջ, Ժուճիկի հրապարակ, «Ըրէյմ» տպարանին դիմացը:

Երգեցողութիւնը պիտի կատարէ Չմառու Ընծայարանի դպրաց դասը:
Սիրով հրաւիրուած են շրջանի հայ հաւատացեալները:

Զրիստոս Սմա եւ Յայտնեցալ
Օրհնեալ եւ Յայտնութիւն Զրիստոսի

ԺՈՂՈՎՐԴՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՆԱԿ

ԷՆ. ՊԻ. ԷՅ.

ՊՈՍԹԸՆ ՍԵԼԹԻՔՍ Կ'ԱՐՇԱԿԷ

ԷՆ. ՊԻ. ԷՅ.ի երէկուան մրցումներուն, Պոսթըն Սելթիքս իր դաշտին վրայ արձանագրեց յաջորդական իր վեցերորդ յաղթանակը, 110 - 94 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Օրլանտո Մէճիքը, որ այսպիսով իր կատարած վերջին հինգ մրցումներուն կրեց իր չորրորդ պարտութիւնը: Յաղթական կազմին մարզիկներէն Անթուան Ուոքըրը նշանակեց 30 կէտ, իսկ անոր խմբակից Փոլ Փրիսը՝ 24 կէտ:

Հակառակ իր արձանագրած այս յաղթանակին սակայն, Սելթիքս Նիւ Ճըրզի Նէթցի ետին կը գրաւէ Ատլանտեան գօտիի (Արեւելեան շրջան) երկրորդ դիրքը: Այս վերջինը իր կարգին յաղթանակ մը արձանագրեց 92 - 74 արդիւնքով պարտութեան մատնելով Մեմֆիս Կրիզլերը:

Քրիվլէնտ Քաւալիըրը իր դաշտին վրայ 113 - 98 արդիւնքով պարտութեան մատնեց Կոլտըն Սթիւթ Ուորիըրը: Այսպիսով, անիկա 28 նոյեմբեր 1990էն ի վեր իր դաշտին վրայ շարունակեց մնալ անպարտելի՝ Ուորիըրի դէմ: Քաւալիըրը մարզիկ Լէմընտ Միւրէյնը նշանակեց 40 կէտ:

Լոս Անճելըս Լէյքըրը մէկ կէտի տարբերութեամբ՝ 87 - 86 արդիւնքով պարտութեան մատնեց Տենվըր Նակէթցը: Լէյքըրի մարզիկ Քոպէ Պրայընթը նշանակեց 28 կէտ:

Յաղթանակ արձանագրողներու շարքին եղաւ նաեւ Սան Անթոնիո Սփըրզ, որ 97 - 85 արդիւնքով պարտութեան մատնեց Տիթրոյիթ Փիլթըրը: Թիմ Տանքընը նշանակեց 20 կէտ եւ 15 դիպուտ, իսկ Սփըրզի անոր խմբակից Սթիւ Սմիթը՝ 15 կէտ:

Ստորեւ՝ երէկուան մրցումներուն արդիւնքները:	
Պոսթըն Սելթիքս - Օրլանտո Մէճիք	110 - 94
Քրիվլէնտ Քաւալիըր - Կոլտըն Սթիւթ Ուորիըր	113 - 98
Նիւ Ճըրզի Նէթց - Մեմֆիս Կրիզլեր	92 - 74
Միցետա Վուլվո - Միլուոքի Պաքս	95 - 77
Տալաս Մալլըրիս - Տիքսո Պուլզ	107 - 97
Սան Անճելըս Սփըրզ - Տիթրոյիթ Փիլթըր	97 - 85
Լոս Անճելըս Լէյքըր - Տենվըր Նակէթց	87 - 86
Ֆիլադելֆիա Սիքսըրզ - Ֆեօնիքս Սանզ	102 - 81
Թորոնթօ Ռեյվըրզ - Փորթլենտ Թրէյլ Պլէյքըր	95 - 84
Սաքրամենթօ Քինկզ - Լոս Անճելըս Քրիվըր	105 - 91

●ՍՏՈՐԵԻ՝ այսօրուան մրցումներուն յայտագիրը: Կոլտըն Սթիւթ Ուորիըր - Տարլոք Հոնգթըք Տալաս Մալլըրիս - Նիւ Եոք Նիքս Տիթրոյիթ Փիլթըր - Հիուսթըն Ռոքեթք

Ստորեւ՝ դասակարգումը - ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐՁԱՆ

(Ատլանտեան գօտի)	ՅԱՂԹ. ՊԱՐՏ.
Նիւ Ճըրջի Նէթց	20
Պոսթըն Սելթիքս	19
Ուաշինկթոն Ուիլարտօ	16
Օրլանտո Մէճիք	15
Նիւ Եոք Նիքս	13
Ֆիլադելֆիա Սիքսըրզ	13
Մայնի Հիթ	6

(Կենտրոնական գօտի)	ՅԱՂԹ. ՊԱՐՏ.
Միլուոքի Պաքս	18
Թորոնթօ Ռեյվըրզ	17
Ինստիտուտ Փիլթըր	18
Տիթրոյիթ Փիլթըր	15
Տարլոք Հոնգթըք	13
Քրիվլէնտ Քաւալիըր	13
Աթլանթա Հոքս	11
Շիքսօ Պուլզ	6

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐՁԱՆ (Միջադէմութեան գօտի)

Սան Անթոնիո Սփըրզ	22	7
Տալաս Մալլըրիս	22	9
Միցետա Վուլվո	21	9
Եուրա Ճէլ	16	15
Տենվըր Նակէթց	10	20
Մեմֆիս Կրիզլեր	9	22
Հիուսթըն Ռոքեթք	9	22

(Խաղաղական գօտի)

Լոս Անճելըս Լէյքըր	22	6
Սաքրամենթօ Քինկզ	24	9
Ֆեօնիքս Սանզ	18	14
Սիքսըրզ Ուիլարտօ	16	15
Լոս Անճելըս Քրիվըր	16	15
Փորթլենտ Թրէյլ Պլէյքըր	13	18
Կոլտըն Սթիւթ Ուորիըր	12	19

ՌԵՒԱԿ ՄԱՏՐԻՏ - ԱԹԼԵԹԻՔՕ ՄԱՏՐԻՏ՝

3 - 2

Յուրիստիքային արդիւնքներուն արդիւնքներուն մը ընթացքին, որ տեղի ունեցաւ «Մանիսթալ Պրոնապէտ»-ի մէջ, Ռեալ Մատրիտ 3 - 2 արդիւնքով պարտութեան մատնեց մալթա Սալթիքսը: Անոնք երկուքը առաջին անգամ ըլլալով իրարու դէմ յանդիման կու գային, Աթլետիքայի երկու եղանակաւ առաջ Բ. դասակարգ փոխադրուելէն ետք:

Հակառակ արդիւնքներուն արդիւնքներուն մը ըլլալուն, անոնց միջեւ այդ հանդիպումը եղաւ կոշտ: Նշենք, թէ այս մրցումը կատարուած էր յաջողութեամբ համար Մատրիտի թելկա-ժուրնալը՝ 2010ի Ողիմպիականին մրցումները հիւրընկալելու համար:

Ռեալ Մատրիտի լեռնապահ Իվան Քանչօ, երեք անուան բացակայութենէ մը ետք վերադարձաւ դաշտ (նախապէս վիրատու): Նոյնն էր պարագան պրայիլի Մալիոյի, որ նախապէս վիրատու էր:

Աթլետիքայի նախկին արդիւնքներուն 40-րդ րոպէսին 18րդ վայրկեանին բացաւ մրցումին հաշիւը, մինչ անցաւ կոլտըն Նախակէցին շէլիուրա եւ Սեյալտա: Աթլետիքայի առաջին ինքնակէց 17 տարեկան Ֆեռնանտօ Թորէս, իսկ երկրորդը՝ Ռալֆը:

Շ ա ք ա թ ա վ Է ը ջ ի ն Սպանիոյ ախոյանու-

ԱՆԳՒԹՈՅ ՅՈՒԹՊՈԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՄԱՆՉԵՍՏԵՐ ԵՈՒՆԱՅՈՒՆ ԲԱՐՉՐԱՅԱԻ 2ՐԴ ԴԻՐՔ

Անգլիոյ ֆուտբոլի ախոյանութեան 21րդ հանգրուանէն յետոյ Երկու մրցումներու ընթացքին, Մանչեսթըր Եունայթըտ արձանագրելէ ետք յաջորդական իր վեցերորդ յաղթանակը, բարձրացաւ 2րդ դիրք, իր ունեցած կոլէկտիվին շնորհիւ գերազանցելէ ետք Արսենալը (3րդ) եւ Նիւքասթըլը (4րդ):

Իր դաշտին՝ «Օլտ Թրեֆորտ»ի մէջ տեղի ունեցած մրցումին, որուն ներկայ էր աւելի քան 67 հազար համակիր, մարզիչ Ալեքս Ֆերկլընի կազմը 3-1 արդիւնքով պարտութեան մատնեց Նիւքասթըլը, որ իր կրած այս պարտութեամբ նահանջեց 4րդ դիրք: Հիւրընկալ կազմին կողմէ նշանակեցին Ռուու Վան Նիսթըրույ (24րդ) եւ Փոլ Սթըլզ (50րդ եւ 62րդ), իսկ Նիւքասթըլի կողմէ Շիրըր (69րդ): Նշենք, թէ յաղթանակի մը պարագային Նիւքասթըլ պիտի գրաւէր դասակարգման պարագլուխի դիրքը:

Դեկտեմբեր 8ին, Ուէսթ Համփթ 1-0 արդիւնքով պարտութեան մը կրելէ ետք Մանչեսթըր Եունայթըտ նահանջեց մինչեւ 9րդ դիրք, սակայն այժմ անիկա երկու կէտով ետ կը մնայ մնաց պարագլուխի դիրքը գրաւող Լիվըն, որ ունի 41 կէտ:

Մրցումին ետք Նիւքասթըլի մարզիչ Պոպի Ռոպըրտ յայտնեց, թէ իր արձանագրած այս յաղթանակէն ետք Մանչեսթըր փաստեց, որ կը մնայ տիտղոսին զլիաւոր թեկնածուներէն մէկը: Իր կազմին բացի, ան տիտղոսին իրեն թեկնածու նկատի ունի Արսենալը:

Էլըն Շիրըր, որ Նիւքասթըլի հետ դաշտ կը ներկայանար 200րդ մրցումն ըլլալով, յաջողեցաւ նշանակել եղանակի իր 11րդ կոլը: Անոր կողմէ նշանակուած այս կոլը նկատուեցաւ պատմական, որովհետեւ ան ֆուտբոլիստի իր ասպարէզին ընթացքին առաջին անգամ ըլլալով Եունայթըտի դէմ կոլ կը նշանակէր՝ «Օլտ Թրեֆորտ»ի մէջ:

Տեղի ունեցած երկրորդ մրցումին ընթացքին Ֆուլհէմ 1-0 արդիւնքով յաղթական վերադարձաւ Տերպի Քաուլթերի դաշտէն, շնորհիւ՝ Հորասիօ Քարպոնարի նշանակած կոլին (72րդ)՝ սխալմամբ իր բերդէն ներս):

ԴԱՍԱԻՈՐՈՒՄ	Մրց. Կէտ
1. Լիվ	21 41 (33-17)
2. Մանչեսթըր Եունայթըտ	21 39 (51-31)
3. Արսենալ	20 39 (41-24)
4. Նիւքասթըլ	21 39 (39-28)
5. Լիվըրպոլ	20 38 (30-20)
.....
18. Տերպի Էաուըթ	21 19 (15-36)
19. Իփսուիչ	21 18 (26-31)
20. Լալսթըր Սիթի	20 16 (14-36)

●ՍՏՈՐԵԻ՝ կոլսորդներու դասակարգումը:
1.- Թիերի Հանի (Արսենալ) 16 կոլ
2.- Ճիմի Ֆլոյտ Հասթլայնք (Չելսի) 14 կոլ
3.- Ռուու Վան Նիսթըրույ (Մանչեսթըր Եունայթըտ) 13 կոլ
4.- Մայքըլ Ռիքթըք (Պուլթըն) եւ Էլըն Շիրըր (Նիւքասթըլ) 11ական կոլ
5.- Մայքըլ Օուլըն (Լիվըրպոլ) եւ Մարիան Փահարս (Սաութհեմթըրն) 10ական կոլ

ՌՈՒԻ ԲՈՍԹԱ ՊԻՏԻ ԲԱՅԿԱՅԻ ԱՄԻՍ ՍԸ

Ա. Սէ. Միլանի փորձագաղի միջազգային միջնապահ Ռուի Բոսթա շուրջ մէկ ամիս պիտի բացակայի դաշտերէն՝ վերաւոր ըլլալով, յայտնեցին անոր պաշտօնախանութիւնը:

Ան անցաւ Դեկտեմբեր 23ին, Վերոնայի դէմ մրցումին վերաւորուած էր: Անցնող քանի մը օրերուն քննութիւններէն ի յայտ եկած էր, որ ան մէկ ամիս հանգիստի պէտք ունի, ամբողջութեամբ ապաքինուլու համար: Ան անցաւ Յունիսի Ֆիրենցիինային միացած էր Ա. Սէ. Միլանին, փոխան՝ 35 միլիոն տոլարի:

Վաղը՝ Շաբաթ, Լեյքի դէմ տեղի ունենալիք մրցումին (Քալչիօ) Միլանի մարզիչ Քարլօ Անջելլօթի Բոսթան պիտի փոխարինէ Անտրէա Փիրլոյով:

ՍՈՒՐԱ ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԸ ՆՈՐ ՄԻՍԻ

Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Տեառն Մերոյ Յիսուսի Զրիստոսի Սուրբ Ծննդեան տօնին առիթով, Կիրակի, 6 Յունուար 2002ին, համադիւսար Սուրբ եւ անմահ պատարագ պիտի մատուցուի Ս. Սարգիս Եկեղեցոյ մէջ:

Պիտի պատարագ եւ քարոզ՝
ՀՈԳՇ. Տ. ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. ԶԻՖԻԺԵԱՆ

Սկիզբ ժամերգութեան	ժամը 7:30ին
Ս. պատարագ	ժամը 9:30ին
Զարոգ	ժամը 10:30ին
Ջորժիտէ	ժամը 11:00ին

Սիրով կը հրաւիրուի հաւատացալ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու հոգեպարար այս արարողութեան եւ վերահորդուելու իր քրիստոնէական հաւատքին մէջ:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԶԻՆԻ ԺԱՄԱՆԵՑ ԾՐՋԱՆ...

Շարունակում Ա. Էջեն

պաշտօնատարներին՝ Ալեքսանտր Եսքովենցո ըսաւ, որ Արաֆաթի դէմ արգելքին ջնջումը կը մեղմացնէ նաեւ լարուածութիւնը:

բանբերը:

ԵՐՈՊԱԿԱՆ ԼԱՆԱՀԵՆՈՒԹԻՒՆ

Յառաջիկայ շաբաթ Միջին Արեւելք պիտի այցելէ Եւրոպական Միութեան արտաքին քաղաքականութեան պատասխանատուն՝ Խաւիէ Սոլանան, որուն այցելութեան նպատակը պիտի ըլլալ թափ տալ ու պորավիզ կանգնել ամերիկեան խաղաղարար ճիգերուն, յայտնեցին դիւանագետներ:

Սոլանա Իսրայէլ պիտի հասնի Կիրակի օր: Եւրոպացի դիւանագետ մը ըսաւ, որ Սոլանայի առաքելութեան նպատակը Զինիի հետ ձգտելու համակարգումն է, Կինադուլ մը հաստատելու եւ գործադրութեան ղեկավար համար թեմէթի եւ Միջուկի ծրագիրները:

Սոլանա տեսակցութիւններ պիտի ունենայ Շարունի, Արաֆաթի ու բարձրաստիճանային պաշտօնատարներու հետ: Այս պահի վրայ այցելէ Յորդանան եւ Եգիպտոս՝ տեսակցութիւն ունենալու համար անոնց ղեկավարներուն հետ:

ՅՍՐԱՅԷԼ Եւ Միացեալ Նահանգներ բանակցութիւններ կը կատարեն ամերիկեան տնտեսական օժանդակութեան ծրագրի մը մասին՝ փոխարինելու համար 800 միլիոն տոլարի ծրագիրը, որ խոստացուած էր նախկին նախագահ Պիլ Բիլինթրոնի կողմէ եւ ստեղծուած ճորճ Պուշի կողմէ, հաղորդեց «Հասարակ» օրաթերթը:

ՊԼԵՐ ՀՆԳԿԱՍՏԱՆ ԿԸ ՄԵԿՆԻ...

Շարունակում 3րդ էջէն

Պլեր յայտարարեց Նիւ Են-հին ու Իսլամապարտ համոզելու, որ բանակցութիւններու ձեռնարկէն՝ խոստացելու համար պատերազմի ընտրանքէն:

Փաքիստանի նախագահ Փերվիզ Մուշարաֆ երկէր զիջեր Պէյճիւնի ժամանեց տեսակցութիւն մը ունենալու համար Զինաստանի վարչապետ ժու Ռուզվիհի հետ: Գիւսնագետները մեկնաբաններ զիջելու տան, որ Մուշարաֆ կ'ուզէ ժուին վստահեցնել, թէ յանձնառու կը մնայ տագնապը խաղաղ միջոցներով լուծելու ընտրանքին:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԼՈՆՏՈՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԱԿԱՐԱՆ

Լոնտոնի սակարանին մէջ, դրամանշնչներու փոխանակման սակը հետեւեալն էր երկ կէսօրին.

Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.	
Եւրո	0.8993
Ֆրանսական ֆրանք	7.29
Քանադական տոլար	1.5977
Գերմանական մարք	2.1736
Հոլանդական ֆլորէն	2.4491
Չեխոսլովակական ֆրանք	1.6497
Պոլսի ֆրանք	44.832
Իտալական լիր	2151.89
Ճափոնական են	131.64
Շուեդական քրոն	10.2723
Նորվեգական քրոն	8.894
Դանիական քրոն	8.2805
Մէկ սթերլին	1.4374

ՌԻՍԱՄԱ ՊԸՆ ԼԱՏԷՆԻ ՀԵՏՔԵՐԸ ԱՆՅԱՅՏ...

Շարունակում Ա. Էջեն

լու համար անոնց, որոնք Ուսամա Պըն Լատենի «Քայտա» ցանցին մնացեալ անդամները կը հետապնդուին:

Իր սեփական իշխանութեան հանդէպ հետպահեւտ աճող վստահութեան ցուցանիշով մը, Քապուլի փոխանցման նոր կառավարութիւնը երկէր պատարճակած է թալեպան 269 պիւնտրներ, որոնց մէկ մասը իբրեւ պատերազմի զէր ընդդիմադիր ուժերու կողմէ բանտարկուած մնացած է 5 տարի:

Տարիներու պատերազմներէ ետք, մինչ քանի որ տակաւին վերակառուցման նախնական հանգրուաններուն մէջ կը գտնուին, ուժեղ երկրաշարժ մը հարուածած է հիւսիսային շրջանը, որ 1998ին պատահած ցնցումներէ յետոյ քան 8 հազար կոտիլի մը էին: Այս պատերազմի սակայն հակառակ անոր որ մայրաքաղաք Քապուլը ցնցուած է եւ ցնցումները հասած են Հնդկաստան, վնասներու մասին անմիջական տեղեկութիւն չ'է տրուած:

Ինչ կը վերաբերի մոլլա Օմարի, կ'ենթադրուի, թէ ան պատասխանած է Գանուսի քաղաքէն շուրջ 160 քմ. հիւսիս-արեւմուտք գտնուող Հելման նահանգին Պարանի շրջակայ լեռներուն վրայ: Կ'ենթադրուի նաեւ, որ շուրջ 1000 պիւնտրներ կը պաշտպանէր պալ:

Փենթակոնը Զորքաշարքի օր յայտնած է,

թէ ամերիկացի հարիւրաւոր պիւնտրներ հասած են Գանուսի մէջ գտնուող պիւնտրական էջուղի մը, աոիթ տալով արդէն իսկ հոն գտնուող ծովուծի աւելի քան 1000 անդամներու, որ այլ պարտականութիւններ ստանձնեն:

Սակայն Պըն Լատենի հետքը կը թուի կորուսած ըլլալ՝ Փաքիստանը Աֆղանիստանէն բաժնող լեռնային լայնածիր գոտիի մը մէջ:

Ամերիկեան թերթերը երկէր հաղորդած են, որ ամերիկեան ծովուծի անդամներու Աֆղանիստանի մէջ մեծագոյն գործողութիւններէն մէկուն ընթացքին, անոնք Հելմանի մէջ գտած են «Քայտա»ի մէկ համալիրը, որ վերջին

(ՌՈՅԹԸՐԸ)

ՍԱԿԱՐԱՆ

Պէլլոնի սակարանին մէջ օտար դրամանշնչներու փակման սակագիւցերը հետեւեալն էր երկ կէսօրին.

Սուրիական թղթուկի Իրաքեան տինար	31,50 - 33,50 լ.ն.
Պահրէյնեան տինար	50,00 - 51,00 լ.ն.
Քուէյթեան տինար	3990,00 - 4010,00 լ.ն.
Յորդանանեան տինար	4924,42 - 4928,42 լ.ն.
Յորդանանեան տինար	2121,42 - 2125,24 լ.ն.
Ա. Մ. Էմիրութեան տինար	408,43 - 412,42 լ.ն.
Սէուտական ռիալ	399,90 - 403,99 լ.ն.
Օմանեան ռիալ	3900,00 - 3930,00 լ.ն.
Քաթարեան ռիալ	412,15 - 416,15 լ.ն.
Եգիպտական կինէ	354,72 - 358,72 լ.ն.
Անգլիական սթերլին	2181,70 - 2185,11 լ.ն.
Գերմանական մարք	678,47 - 682,84 լ.ն.
Հոլանդական ֆլորէն	602,66 - 606,14 լ.ն.
Ֆրանսական ֆրանք	200,76 - 204,98 լ.ն.
Չեխոսլովակական ֆրանք	911,35 - 915,52 լ.ն.
Պոլսի ֆրանք	33,63 - 34,42 լ.ն.
Դանիական քրոն	230,25 - 250,27 լ.ն.
Սլովակական ֆլորէն	8,02 - 9,04 լ.ն.
Թրքական լիր	3,62 - 3,64 լ.ն.
Կիպրական փաունտ	2357,85 - 2361,17 լ.ն.
Իտալական հապար լիր	687,65 - 691,70 լ.ն.
Ճափոնական հապար են	11011 - 11015 լ.ն.
Ամերիկեան հապար ֆրանք	2450 - 2452 լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1514,00 լ.ն.
Քանադական տոլար	941,40 - 945,85 լ.ն.
Աւստրալիական տոլար	772,85 - 776,70 լ.ն.
Եւրո	1354,95 - 1358,16 լ.ն.

ՈՍԿԻ

Անգլիական մէկ ոսկի	105,000 - 115,000 լ.ն.
Իրանեան մէկ ոսկի	91,000 - 101,000 լ.ն.
Օմանեան մէկ ոսկի	80,000 - 90,000 լ.ն.
Մէքսիկական փէսոս	475,000 - 498,000 լ.ն.
Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի	12,300,000 - 12,800,000 լ.ն.
Մէկ օնս ոսկի	275,65 - 277,85 \$
Մէկ օնս արծաթ	4,52 - 4,56 \$

ՍՈՒԿԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ

	Գինի Ա. 62դում	Գինի Բ. 62դում
Ա. կարգի	4 3/8	4 3/8
Բ. կարգի	4 4/8	4 4/8
Բաժնետիր		

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5044

Պատրաստեց՝ Տ.Մ. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

ՇՈՒԿՈՆԱԿԱՆ	ՈՒՂԱՇԱՅԵԱՑ
1. Գոռոզ, խրոխտ:	1. Վահանի փոր - Արա-կան անուն:
2. Անօգուտ - Հալիա-կան ամիսներու ժ.Ձ. օրը:	2. Շողկապ - Դուռէճ, կաքաւազգի թռչուն:
3. Անձնական դերա-նուն - Մուկերու ծուղակ:	3. Ոսկորներու ամբողջութիւն - Մէկ:
4. Զգուելի, գանելի - Վախկոտ:	4. Երեւոս - Յովհան-նէս Թումանեանի երկերէն:
5. Հրապարակային պատուէր - Զրային մեծագոյն ստնաւորը:	5. Իրերայաջորդ տա-ներ - Դատարկարան:
6. Որդի:	6. Իգական օտար անուն - Երգուել:
7. Գնչուներու սալ - Նոյն գիրերը - Հաստա-տական պատասխան:	7. Պաղեստինեան քաղաք - Իտալիոյ գետերէն:
8. Նաեւ - Շուտով պատահելիք:	8. Իգական օտար անուն - Լուսինի բակ:
9. Սեռակից, համագ-գի:	9. Վահանակ - Զա-գագի թռչուն:
10. Արար իշխան - Յու-սակտուր, վհատ:	10. Իգական անուն - Շողկապ - Ո՛ւր:
11. Եւրոպական ոստան - Արական օտար անուն:	11. Յովհաննէս - Վանի Հին անուններէն:

ԹԻՒ 5043

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Կ	Ե	Ն	Ե	Ղ	ՈՒ	Տ	Տ	Ի	
2	Ա	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	
3	Տ	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	
4	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	
5	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	
6	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	
7	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	
8	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	
9	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	
10	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	
11	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	

ولعت الشؤوية مع

Panasonic

21" TC-21PM30R
شاشة مسطحة
متعدد الأنظمة
محطة 100
ريموت
\$ 305

15" TC-15PM10R
شاشة مسطحة
متعدد الأنظمة
محطة 100
ريموت
\$ 185

هدية سماعة بقيمة \$ 20

وآلاف الهدايا داخل العلب

هدية راديو كاسيت بقيمة \$ 45

العرض فقط على أجهزة التلفزيون / الفيديو / الستيريو / كاميرا الفيديو المستوردة من قبل الوكيل الحصري. شركة توتونجيان ش.م.ل. - (٢) ٢٤٢٢٠٢ - ٧١٩٦٧ / ٢٠٠٢ - ٧١٢١٩٢ / ٢٠٠٢
مدة العرض: من ٢٠٠١/١١/١٩ لغاية ٢٠٠٢/١/٢٠